



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՏԱՌԱԴԻՈԼՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՏԱՌԱԴԻՈԼՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1. Սեր մասին	- - - - -	3
2. Հանրային հեռուստառադիոընկերության 2010 թվականի գործունեության նպատակները	- - 6	
3. Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ	- - - - -	9
4. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	- - - - -	11
5. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ	- - - - -	33
6. «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ	- - - - -	41
7. «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ	- - - - -	45

## 1. Մեր մասին

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2000 թվականի հոկտեմբերի 9-ին ընդունվեց «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը, որը հիմք հանդիսացավ Հայաստանում անկախ Հանրային հեռուստառադիոընկերության ստեղծման և գործունեության համար: Հայաստանի Հանրապետության Նախագահի 19.01.2001թ. ՆՀ-798 հրամանագրով ստեղծվել է Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը, իսկ Հանրային հեռուստառադիոընկերություն պետական հիմնարկը գրանցվել է 2001 թվականի հունիսի 7-ին (N Բ005006 պետական ռեգիստրի վկայական):

2001 թվականի հուլիսի 30-ին գրանցվել է «Հայաստանի հանրային հեռուստարձնկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (N02Ա051177 պետական ռեգիստրի վկայական), որն իրականացնում է Հանրային հեռուստառադիոընկերության հեռուստատեսային հաղորդումների արտադրության և հեռարձակման գործունեությունը: Հանրային հեռուստարձնկերությունը, սկսելով իր գործունեությունը Ազգային հեռուստատեսությունից փոխանցված շենք-շինություններում և տեխնիկական միջոցներով, հետագա տարիների ընթացքում տեխնիկական վերազինման միջոցով տեխնիկական միջոցների զգալի մասը աստիճանաբար փոխարինել է նոր, ժամանակակից հեռուստատեսային տեխնիկայով: Ներկայում Հանրային հեռուստարձնկերությունը ունի իր գործունեության ապահովման համար բավարար տեխնիկական բազա, սակայն ժամանակակից հեռուստատեսային տեխնիկան արագ սերնդափոխվում է, և նոր տեխնոլոգիաների և նորամուծությունների ներդրումը պահանջում է շարունակական տեխնիկական վերազինման գործընթաց: Ուստի Հանրային հեռուստարձնկերությունը յուրաքանչյուր տարի իրականացնում է տեխնիկական վերազինման ծրագիր՝ ելնելով այդ նպատակով առկա ֆինանսական միջոցներից ու առաջնահերթություններից:

Հանրային հեռուստարձնկերությունը իրականացնում է հեռուստահաղորդումների արտադրություն և հեռարձակում երեք հեռուստալիքներով՝ «Հ1» առաջին ալիք, «Արարատ» մշակութային հեռուստաալիք և «Հ1» միջազգային ալիք (արքանյակային հեռարձակմանը): «Հ1» առաջին ալիքի հաղորդումները հեռարձակվում են հանրապետության ողջ տարածքում: «Արարատ» մշակութային հեռուստաալիքը հեռարձակվել է հանրապետության տարածքի գերակշիռ մասում, զբերե բոլոր խոշոր բնակավայրերում (Երևանում, Վանաձորում, Չարենցավանում, Սևանում, Գավառում, Եղեգնաձորում, Զերմուկում, Ծաղկաձորում և Շիրակի մարզում): «Հ1» միջազգային ալիքը հեռարձակվում է ԱՊՀ տարածքում, Եվրոպայում, Մերձավոր Արևելքում Հյուսիսային Աֆրիկայում և Հյուսիսային Ամերիկայում: Գործունեության առաջին օրվանից Հանրային հեռուստարձնկերությունը հայաստանյան հեռուստաեթերի առաջատարն է և այժմ էլ պահպանում է իր ուրույն տեղը հայկական հեռուստաեթերում՝

ապահովելով հանրության բոլոր շերտերի և խավերի պահանջմունքները բավարարող հեռուստահաղորդումների բազմազանություն:

2001 թվականի դեկտեմբերի 28-ին գրանցվել է «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (N 03Ա 052744 պետական ռեգիստրի վկայական), որն իրականացնում է Հանրային հեռուստառադիոընկերության ռադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործունեությունը: Հանրային ռադիոընկերությունը իր գործունեությունը սկսել է Ազգային ռադիոյից փոխանցված շենք-շինություններում և տեխնիկական միջոցներով: Հետագա գործունեության ընթացքում Հանրային ռադիոընկերությունը տեխնիկապես վերազինել է եթերային և տաղավարային տեխնիկական համակրները, որի շնորհիվ ներկայումս ռադիոհաղորդումները պատրաստվում և հեռարձակվում են ժամանակակից չափանիշներին համապատասխանող տեխնիկական միջոցներով:

Հանրային ռադիոընկերությունը իրականացնում է ռադիոհաղորդումների պատրաստում և հեռարձակում «Առաջին ծրագիր», «Երկրորդ ծրագիր» ծրագրերով, ինչպես նաև պատրաստվում և հեռարձակվում են հաղորդումներ արտասահմանի համար: Հանրային ռադիոընկերության հաղորդումները հեռարձակվում են միջին, կարճ, գերկարճ և FM հաճախականություններով:

Հանրային ռադիոընկերությունը հայաստանյան ռադիոերում ընդգծված առաջատար է և առանձնանում է իր բազմաբովանդակ և հանրության բոլոր շերտերի պահանջմունքների բավարարմանն ուղղված հաղորդաշարերով:

ՀՀ կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 29-ի «Գյումրու «Չիրակ» հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերության մասին» N 1312 որոշման համաձայն «Գյումրու «Չիրակ» հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերության՝ պետական սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահել է Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին: Վերջինիս որոշմամբ ընկերությունը վերանվանվել է «Չիրակի հանրային հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերության, որը հեռուստառադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործունեություն է իրականացնում ՀՀ Չիրակի մարզում: Ունենալով սահմանափակ ռեսուրսներ՝ «Չիրակի հանրային հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերությունը իր հետագա գործունեության ընթացքում որոշակիորեն իրականացրել է տեխնիկական վերազինման աշխատանքներ, սակայն դեռևս տեխնիկական միջոցների առումով ընկերությունն ունի լուրջ խնդիրներ: Ներկայումս միջոցներ են ձեռնարկվում Չիրակի հանրային հեռուստառադիոյի շենքային պայմանները բարելավելու և տեխնիկապես վերազինելու ուղղությամբ: Չիրակի հանրային հեռուստառադիոն հեռուստահաղորդումների հեռարձակումն իրականացնում է Գյումրի քաղաքում և հարակից տարածքներում

դեցիմետրային տիրույթի 39-րդ կապուղով և Ամասիայում՝ 41-րդ դեցիմետրային կապուղով, իսկ ուղղիհաղորդումների հեռարձակումն իրականացնում է FM տիրույթում: Շիրակի հանրային հեռուստառադիտն միակ մարզային Հանրային հեռուստառադիտընկերությունն է և իր հաղորդումներում հիմնականում անդրադառնում է մարզի առօրյային, խնդիրներին և մշակութային կյանքին:

ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի 6-ի «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորությունները Հանրային հեռուստառադիտընկերության խորհրդին վերապահելու մասին» N1401-Ն որոշման համաձայն «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության՝ պետական սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվել են Հանրային հեռուստառադիտընկերության խորհրդին: Ընկերության գործունեության հիմնական նպատակը Հանրային հեռուստառադիտընկերության կողմից հեռարձակվող հաղորդումների և հաղորդաշարերի վերաբերյալ հանրության կարծիքի ուսումնասիրությունն է, ինչը հնարավորություն է տալիս հանրությանը մասնակից դարձնել Հանրային հեռուստառադիտընկերության ծրագրերի կազմման գործընթացին:

2006 թվականից Հանրային հեռուստառադիտընկերությունը EBU-ի (Եվրոպական Հեռարձակողների Միություն) լիիրավ անդամ է, ինչը հնարավորություն է տալիս Հանրային հեռուստառադիտընկերությանը ընդլայնել փոխադարձ համագործակցության շրջանակները կազմակերպության անդամ հեռուստառադիտընկերությունների և ուղիղընկերությունների հետ, ինչպես նաև Հայաստանը ներկայացնել այդ կազմակերպության կողմից կազմակերպվող միջազգային միջոցառումներում (Եվրատեսիլ, Մանկական Եվրատեսիլ և այլն):

Հանրային հեռուստառադիտընկերության դեկավար մարմինը Հանրային հեռուստառադիտընկերության խորհրդին է, որը բաղկացած է հինգ անդամներից, որոնց, իր հաստատած մրցութային կարգի համաձայն, նշանակում է Հայաստանի Հանրապետության Նախագահը: Հանրային հեռուստառադիտընկերության խորհրդի նախագահն է Ալեքսան Հարությունյանը, խորհրդի նախագահի տեղակալ՝ Վահրամ Բաղդասարյանը, իսկ խորհրդի անդամներ են՝ Ստեփան Զաքարյանը, Մերուժան Տեր-Գոլանյանը և Նարա Շլեպչյանը: Մերուժան Տեր-Գոլանյանը և Նարա Շլեպչյանը խորհրդի անդամներ են նշանակվել ՀՀ Նախագահի 2011 թվականի մարտի 19-ի N ՆՀ-47-Ա հրամանագրով: 2010 թվականին Հանրային հեռուստառադիտընկերության խորհրդի անդամներ էին նաև Ստեփան Պողոսյանը (խորհրդի նախագահի տեղակալ) և Հենրիկ Հովհաննիսյանը, որոնց պաշտոնավարման ժամկետը ավարտվել է 2011 թվականի փետրվարի 14-ին:

## 2. Հանրային հեռուստառադիորնկերության 2010 թվականի գործունեության նպատակները

Հայաստանի հանրային հեռուստառադիորնկերությունը 2010 թվականին շարունակել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների և պարտավորությունների իրականացմանը նպատակառուղղված գործունեությունը։ Ոլորտում իրականացված քաղաքականության և տարվա ընթացքում ծավալած գործունեության հիմքում դրվել են հետևյալ հիմնական նպատակները։

1. Մարդու սահմանադրական իրավունքն ապահովելու նպատակով ապահովել տեղեկատվական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատասնեկան, գիտական, հայոց լեզվի և պատմության, մարզական, ժամանցային և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվական բնույթի հաղորդումների բազմազանություն։
2. Ապահովել հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման աշխատանքների իրականացումը։
3. Արբանյակային կապուղով ապահովել Հանրային հեռուստաընկերության արբանյակային ծրագրի հաղորդումների հեռարձակումը եվրոպական երկրներում, Մերձավոր Արևելքում, Աֆրիկայում և Հյուսիսային Ամերիկայում՝ սփյուռքահայությանն ու միջազգային հանրությանը հնարավորություն ընձեռելով դիտելու Հանրային հեռուստաընկերության հաղորդումները։
4. Հանրապետության բոլոր բնակավայրերում Հանրային հեռուստաընկերության «Հ1» ծրագրի հաղորդումների հեռարձակման և բարձր որակի հեռուստաազդանշան ապահովելու համար «Հ1» ծրագրի հաղորդումների արբանյակային կապով հեռարձակում ՀՀ տարածքում։
5. Ռադիոհաճախություններով, արբանյակային հեռարձակմամբ, ինչպես նաև ինտերնետային կապով ապահովել Հանրային ռադիոընկերության հայերեն և օտար լեզուներով հաղորդումների հեռարձակումն արտասահմանում։
6. Տեխնիկական վերազինման միջոցով բարձրացնել Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության հաղորդումների հեռարձակման որակը, ընդլայնել հեռարձակման տարածքը։
7. Եվրոպական հեռարձակողների միության, մի շաբթ եվրոպական, ԱՊՀ և այլ երկրների հեռուստառադիորնկերությունների հետ փոխշահավետ համագործակցության գարգացում և ընդլայնում։

Վերոնշյալ նպատակների ապահովման համար Հանրային հեռուստառադիոլնկերությունը 2010 թվականին իր գործունեության հիմքում դրել է հետևյալ հիմնական խնդիրների իրազործումը.

- Հանրային հեռուստառադիոլնկերության, Հանրային ռադիոլնկերության և Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից պատրաստվող և հեռարձակվող հաղորդումների բազմազանության ապահովում,
- հանրապետության տարբեր տարածքների, ազգային փոքրամասնությունների, հասարակական տարբեր շերտերի, սոցիալական խմբերի շահերը և քաղաքական ուժերի դիրքորոշումները ներկայացնող հեռուստառադիոհաղորդաշարերի ու հաղորդումների պատրաստում,
- հանրապետության ամբողջ տարածքում և արտասահմանում Հանրային հեռուստառադիոլնկերության և Հանրային ռադիոլնկերության հաղորդումների սկզբան ապահովում,
- հանրությանը անկողմնակալ, հավաստի և օպերատիվ տեղեկատվությամբ ապահովում,
- հեռարձակվող հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների ընդհանուր ծավալում բնակչության լայն խավերին մատչելի հայրենական արտադրության հաղորդումների քանակի ավելացում և ամբողջությամբ հայալեզու եթերի ապահովում,
- հեռուստառադիոլնկերության և ռադիոլնկերության տեխնիկական բազայի վերագինման միջոցով հանրապետության ամբողջ տարածքում հաղորդումների հեռարձակման որակի բարձրացում,
- տեխնիկական վերագինման միջոցով հեռուստառադիոհաղորդումների արտադրության տեխնիկական ծախսերի կրճատում և աշխատակիցների սոցիալական վիճակի շարունակական բարելավման ապահովում,
- հեռուստատեսության և ռադիոյի կողմից տրամադրվող տեղեկատվության նկատմամբ հանրության վստահության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացում,
- բնակչության լայն խավերին հուզող և նրանց կողմից պարզաբանում պահանջող խնդիրների վերաբերյալ հաղորդումների և լրատվության ծավալների ավելացում,
- արքանյակային հեռարձակման տարածքի աստիճանական ընդլայնում՝ գուգահեռաքար կրճատելով այդ ուղղությամբ կատարվող ծախսերը,
- Եվրոպական հեռարձակողների միության անդամ հեռուստառադիոլնկերությունների ու ռադիոլնկերությունների հետ համագործակցության ընդլայնում:

Վերը թվարկված խնդիրների իրագործմանն են ուղղվել «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված միջոցները և ոլորտի ընկերությունների առևտրային գործունեությունից ստացված եկամուտները:

«Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի միջոցով իրականացվել են հետևյալ ծրագրերը.

- 01.01.03.02. Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարներ – 28359.8 հազար դրամ գումարով,
- 08.03.01.01. Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում – 89636.0 հազար դրամ գումարով,
- 08.03.01.02. Հեռուստատեսային ծառայություններ – 2458276.5 հազար դրամ գումարով,
- 08.03.01.03. Ռադիո ծառայություններ – 652735.0 հազար դրամ գումարով,
- 08.03.01.04. Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ – 22961.9 հազար դրամ գումարով,
- 08.03.01.06. Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ – 8000.0 հազար դրամ գումարով:

Թվարկված ծրագրերով նախատեսված աշխատանքներն իրականացվել են «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն», «Հայաստանի հանրային ռադիոընկերություն», «Շիրակի հանրային հեռուստառադիո» և «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների միջոցով:

Նշված ծրագրերի շրջանակներում փաստացի կատարված աշխատանքների ծավալները և պետական բյուջեից ֆինանսավորման ցուցանիշները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

**2010 թվականին Հանրային հեռուստառադիոլոնկերության կողմից իրականացված  
ծրագրերի պետական բյուջեից ֆինանսավորման ցուցանիշները**

(հազար դրամ)

	Ծրագրի անվանումը	Հաստատված բյուջե	Փոփոխութ- յուններ բյուջեում (+ -)	Բյուջեն փոփոխութ- յուններից հետո	Ֆինան- սավորում	Շեղում
1	Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարներ	28359.8	-	28359.8	28359.8	0.0
2	Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տա- րածքային կառավարման մարմինների պահպանում	89636.0		89636.0	88253.9	1382.1
3	Հեռուստատեսային ծառայություններ	2458276.5	13000.0	2471276.5	2471276.5	0.0
4	Ուսումնական ծառայություններ	652735.4	-13000.0	639735.4	639735.4	0.0
5	Ուսումնական ծառայություններ	22961.9		22961.9	22961.9	0.0
6	Հասարակական կարծիքի ուսումնախրման ծառայություններ	8000.0		8000.0	8000.0	0.0
	Ընդամենը	3259969.6	0.0	3259969.6	3258587.5	1382.1

### 3. Հանրային հեռուստառադիոլոնկերության խորհուրդ

Հանրային հեռուստառադիոլոնկերության խորհուրդը հանդիսանում է Հանրային հեռուստառադիոլոնկերության ղեկավար մարմինը, որն իր աշխատանքներն իրականացնում է ամենօրյա գործունեության և նիստերի միջոցով՝ ապահովելով իր գործունեության հրապարակայնությունը:

Հանրային հեռուստառադիոլոնկերության խորհուրդը սահմանում է Հանրային հեռուստառադիոլոնկերության հաղորդումների հեռարձակման ընդհանուր ծավալներն ու հեռուստառադիոլոգների (ալիքների) թիվը, Հանրային հեռուստառադիոլոնկերության

ֆինանսական միջոցների օգտագործման կարգն ու ուղղությունները, հաստատում է Հանրային հեռուստառադիոլնկերության աշխատողների կարգավիճակը և պաշտոնները, նրանց հետ կնքվող պայմանագրերի ձևերը, պայմաններն ու վարձատրման կարգը, համակարգում է իր ենթակայության ընկերությունների ընթացիկ գործունեությունը, մշակում է ոլորտի ծրագրային քաղաքականությունը, լսում է Հանրային հեռուստառնկերության, Հանրային ռադիոռնկերության և ենթակա մյուս ընկերությունների գործադիր տնօրենների հաշվետվությունները:

Հանրային հեռուստառադիոռնկերության խորհրդի և նրա աշխատակազմի պահպանումն իրականացվել է «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրով նախատեսված միջոցներով: Այդ ծրագրով նախատեսված հատկացումներից ծախսվել է 88253.9 հազ. դրամ (տես աղյուսակ 2) և 2010 թվականի գործունեության արդյունքում Հանրային հեռուստառադիոռնկերության խորհուրդը ունեցել է 1382.1 հազ. դրամ գումարի տնտեսում:

2010 թվականին «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրով պետական բյուջեից ֆինանսավորման ցուցանիշները

(հազար դրամ)

Ծախսային հողվածի անվանումը	Նախահաշիվ	Փոփոխություններ նախահաշվում (+ -)	Նախահաշիվը փոփոխություններից հետո	Փաստացի ծախսեր	Ընդուն
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	69418.3		69418.3	69413.8	4.5
Վճարներ Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին	9051.2		9051.2	8666.3	384.9
Կապի ծառայություններ	2948.2		2948.2	2038.9	909.3
Գույքի և սարքավորումների վարձակալություն	3588.0		3588.0	3588.0	0.0
Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	2133.2		2133.2	2133.0	0.2
Ներկայացուցչական ծախսեր	280.0	-280.0	0.0		0.0
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	26.0		26.0	16.0	10.0
Սեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	250.0		250.0	247.2	2.8
Գրասենյակային նյութեր և հագուստ	417.1		417.1	399.8	17.3
Տրանսպորտային նյութեր	1514.0	280.0	1794.0	1749.4	44.6
Պարտադիր վճարներ	10.0		10.0	1.5	8.5
<b>ԸՆԴԱՀՄԵՆԸԸ</b>	<b>89636.0</b>	<b>0.0</b>	<b>89636.0</b>	<b>88253.9</b>	<b>1382.1</b>

Ինչպես և նախորդ տարիներին, 2010 թվականին նույնպես Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդն իր աշխատակազմի միջոցով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով իրեն ամրագրված լիազորությունների շրջանակներում շարունակել է համակարգել Հանրային հեռուստաընկերության, Հանրային ռադիոընկերության և ոլորտի մյուս ընկերությունների գործունեությունը: Մասնավորապես, խորհրդի կողմից հաստատվել են ընկերությունների հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների հեռարձակման ընդհանուր ծավալները և հեռուստածրագրերի և ռադիոծրագրերի /ալիքների/ թիվը, ընկերությունների 2010 թվականի տարեկան եկամուտների և ծախսերի ու դրամական հոսքերի նախահաշիվները, հաղորդումների թեմատիկ ուղղություններն ու ծավալները: Միջոցներ են ձեռնարկվել Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության

օրենքով ամրագրված պարտականությունների կատարման արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Այդ նպատակով որոշակի փոփոխություններ են կատարվել Հանրային հեռուստառադիոընկերության ծրագրային քաղաքականության մեջ, մասնավորապես՝ ավելացել են սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային ուղղվածություն ունեցող հաղորդումների, ինչպես նաև հայրենական արտադրության ֆիլմերի և փաստավավերագրական ֆիլմերի հեռարձակման ժավալները:

Մեծ աշխատանքներ են տարվել ոլորտի միջազգային կառույցների և արտասահմանյան հեռուստարներությունների հետ կապերի և փոխհարաբերությունների ընդլայնման նպատակով, ինչպես նաև միջոցներ են ձեռնարկվել միջազգային մրցույթներին ակտիվ և արդյունավետ մասնակցելու, ինչպես նաև այդ միջոցառումները Հայաստանում կազմակերպելու ուղղությամբ:

Մշակվել է Հանրային հեռուստառադիոընկերության 2011-2013 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագիրը և ոլորտի քաղաքականությունը:

#### 4. «Հայաստանի հանրային հեռուստարներություն» ՓԲԸ

2010 թվականին «Հայաստանի հանրային հեռուստարներություն» փակ բաժնետիրական ընկերությունը շարունակել է հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման իր առաքելությունը և պատրաստել է օրական 24 ժամ հաղորդումներ «Հ1» առաջին ալիքի, 24 ժամ «Արարատ» մշակութային հեռուստաալիքի և 24 ժամ միջազգային ծրագրի (արբանյակային հեռարձակմամբ) համար:

Հանրային հեռուստարներությունը պատրաստել և հեռարձակել է լրատվական, լրատվական-վերլուծական, քաղաքական, տնտեսական, հասարակական, գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմության, մշակութային, կրթական, մանկապատաճեկան, մարզական, երաժշտական ուղղություններով հեռուստահաղորդումներ՝ փորձելով առավելագույնս բավարարել հանրության բոլոր շերտերի հեռուստատեսային պահանջմունքները: Ինչպես նախորդ տարիներին, 2010 թվականին ևս «Արարատ» մշակութային հեռուստաալիքի գործունեությունը ամբողջությամբ ուղղված էր ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ու արդի մշակութային կյանքի համակողմանի ներկայացմանն ու լուսաբանմանը:

Հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման աշխատանքների համար «2010 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով Հանրային հեռուստարներության համար նախատեսվել էր 2458276.5 հազ. դրամ գումար:

2010 թվականի նոյեմբերի 12-ի N 11-011 գրությամբ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը առաջարկություն է ներկայացրել ՀՀ ֆինանսների

նախարարություն միջծրագրային վերաբաշխում կատարելու վերաբերյալ, որի համաձայն կատարվել է վերաբաշխում և ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի «Ռայոն ծառայություններ» ծրագրով տնտեսված 13000.0 հազ. դրամ գումարը տեղափոխվել է «Հեռուստատեսային ծառայություններ» ծրագիր: Այդ գումարը Հանրային հեռուստարանկերությանն է հատկացվել 08.03.01.02 «Հեռուստատեսային ծառայություններ» ծրագրի «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հողվածով, որն ուղղվել է հեռուստատեսային տեխնիկայի ձեռքբերմանը: Մասնավորապես, ձեռք է բերվել հեռուստատեսային կոռունկ՝ օժանդակ սարքավորումներով:

Ընդհանուր առմամբ, «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հողվածով 2010 թվականին ընկերությանը հատկացվել է 2458276.5 հազ. դրամ, որից հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման իրավունքների ձեռքբերման, ինչպես նաև ընկերության ընթացիկ գործունեության ապահովման համար հատկացվել է 1676611.4 հազ. դրամ, հեռարձակման համար՝ 781665.1 հազ. դրամ, իսկ «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հողվածով հատկացվել է 13000.0 հազ. դրամ:

### Հեռուստահաղորդումների պատրաստում


2010 թվականին, պահպանելով առաջատարի իր դիրքը հայաստանյան հեռուստաշուկայում, Հանրային հեռուստարանկերությունը շարունակել է հեռուստահաղորդումների արտադրության գործունեությունը: Հաղորդումների պատրաստման ընթացքում ընկերությունն առաջնորդվել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի պահանջներով և Հանրային հեռուստառադիոնկերության խորհրդի կողմից ընդունված նպատակային ծրագրերով: Տարվա ընթացքում «ՀՀ առաջին ալիքի համար պատրաստվել է խորհրդի կողմից սահմանված թեմատիկ ուղղություններով 8737.4 ժամ հաղորդումներ (տես աղյուսակ 3):

2010 թվականին Հանրային հեռուստաընկերության կողմից պատրաստված հաղորդումների փաստացի ծավալը՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների

N	Հաղորդման թեմատիկ ուղղվածությունը	Հաղորդման պատրաստման ծավալը հաշվետու ժամանակաշրջանում (ժամ)
1	Լրատվական, լրատվական-վերլուծական	724.7
2	Քաղաքական, տնտեսական, հասարակական	943.9
3	Զվարճային	185.9
4	Գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմության	400.9
5	Մշակութային (այդ թվում՝ ֆիլմեր)	3300.7
6	Կրթական, մանկապատանեկան	1105.7
7	Սարգական	566.8
8	Երաժշտական	939.9
9	Հոլովակներ, այլ հաղորդումներ	569.6
	Ընդամենը	8737.4

Հանրային հեռուստաընկերության կողմից պատրաստված հաղորդումների փաստացի ծավալը՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների, ներկայացնենք նաև գրաֆիկական տեսքով:

Գ.ծավատկեր 1.




2010 թվականին Հանրային հեռուստաընկերությունը, եթերում պահպանելով մեծ հեռուստալսարան ունեցող հաղորդումներն ու հաղորդաշարերը, պատրաստել և եթեր է հեռարձակել նաև մի շաբթ նոր հաղորդումներ ու հաղորդաշարեր: 8670.0 ժամ հաղորդումներ ու հաղորդաշարեր են պատրաստվել ու հեռարձակվել «Արարատ» հեռուստաալիքով, որից 7668.9 ժամ՝ մշակութային հաղորդումներ և 1001.1 ժամ՝ այլ հաղորդումներ: Այլ հաղորդումների մեջ մտնում են հիմնականում այն հաղորդումները, որոնք Հանրայինը պարտավոր է (ըստ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների) հեռարձակել երկու հեռուստաալիքով: Դրանք են՝ Ֆուտբոլի չեմպիոնների լիգայի խաղերը, Ֆուտբոլի աշխարհի և Եվրոպայի առաջնության խաղերը և այլ կարևոր ու միջազգային նշանակություն ունեցող միջոցառումներ:


Հեռուստալսարանի չափումներ իրականացնող միջազգային ընկերության տվյալների համաձայն ՀՀ ամբողջ տարածքում Հանրային հեռուստաընկերության հեռուստադիտողների մասնաբաժինը ընդհանուր հեռուստադիտողների լսարանում 2009 և 2010 թվականներին համապատասխանաբար կազմել է 18.3 և 20.24 տոկոս (տես գծապատկեր 2 և գծապատկեր 3):

Գծապատկեր 2.

Հանրային հեռուստաընկերության հեռուստադիտողների  
մասնաբաժինը ընդհանուր հեռուստադիտողների մեջ  
(Հանրապետություն) 2009թ.


Այլ հեռուստաընկե-  
րություններ- 81.7%






Նախորդ տարվա համեմատ այդ ցուցանիշը որոշակիորեն աճել է, և 2010 թվականին Հանրային հեռուստաաընկերությունը հանրապետության ամբողջ տարածքում հեռուստադիտողների մասնաբաժնի ցուցանիշով եղել է առաջատարը, իսկ Հանրայինի բազմաթիվ հաղորդումներ տարվա ընթացքում ունեցել են ամենամեծ հեռուստալսարանը:

«Եվրոդատա» միջազգային կազմակերպությունը յուրաքանչյուր տարի հրապարակում է ավելի քան 73 երկրների, այդ թվում՝ Հայաստանի, հեռուստաեթերների լավագույն (մեծ հեռուստալսարան ապահոված) հաղորդումների ցանկը: 2010 թվականի Հայաստանի հեռուստաեթերի ամենամեծ հեռուստալսարան ունեցող 10 հաղորդումների մեջ գերակշիռ մաս են կազմում Հանրային հեռուստաաընկերության եթերում հեռարձակված հաղորդումները՝ «Եվրատեսիլ 2010», «Եվրատեսիլ 2010-ի հայաստանյան ընտրություն», «Տաշիր 2010. Ազգային 5-րդ մրցանակաբաշխություն» երաժշտական միջոցառումները, «Աննա» և «Որբերը 2» հեռուստատեսային բազմասերիանց գեղարվեստական ֆիլմերը, «Հայլուր» լրատվական ծրագիրը, ծանրամարտի Եվրոպայի առաջնությունը, ֆուտբոլի 2010 թվականի աշխարհի առաջնության եզրափակիչը: 2010 թվականի Հայաստանի հեռուստաեթերի 10 ամենամեծ հեռուստալսարան ունեցող հաղորդումներից 8-ը Հանրային հեռուստաաընկերության հաղորդումներն են (գծապատկեր 4):



Հանրային հեռուստաընկերությունը, 2010 թվականին իր եթերում պահպանելով բարձր վարկանիշ ունեցող հաղորդումները, եթերը համալրել է նաև մի շարք նոր հաղորդաշարերով, որոնցից շատերը նույնպես տարվա ընթացքում ունեցել են բարձր վարկանիշ և նպաստել են եթերի բազմազանության ապահովմանը:

Հանրային «Հայլուր» լրատվական ծրագիրը շարունակել է պահպանել իր առաջատար դիրքը հայաստանյան լրատվական ծրագրերի շարքում, որն օրվա ընթացքում եթեր է հեռարձակվել 9.00, 13.00, 17.00, 21.00 /հիմնական թողարկում/ ժամերին և կեսօհերից հետո, իսկ անհրաժեշտության դեպքում եթեր են հեռարձակվել նաև «Հայլուր»-ի լրացուցիչ թողարկումներ: Ըստ «Տելեմեդիակոնսորտու» փակ բաժնետիրական ընկերության վարկանշային տվյալների՝ «Հայլուրը» հայկական հեռուստաեթերում շարունակել է մնալ ամենամեծ հեռուստալսարան ունեցող լրատվական ծրագիրը՝ 26.14 % մասնաբաժնով (գծապատկեր 5):



«Հայլուր» լրատվական ծառայության գործունեության հիմքում ընկած են օպերատիվության, օբյեկտիվ տեղեկատվության մատուցման և բազմակարծության ապահովման սկզբունքները:

«Հայլուր»-ը Երևանից դուրս թղթակցային կետեր ունի նաև ՀՀ մարզերում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, Զավախքում, Ռուսաստանում, Եվրոպայում, Միացյալ Նահանգներում: 2010 թվականին շարունակել են գործել ԱՍՆ-ի (Լու-Անջելես և Վաշինգտոն) և Ֆրանսիայի (Փարիզ) թղթակցային կետերը:

Ծարարվա իրադարձություններն ամփոփվել են «Հայլուր կիրակի» լրատվական-վերլուծական ծրագրի թղթարկումներում, որոնք հեռուստադիտողին են ներկայացրել մեր հանրապետությունում և արտասահմանում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները, հասարակական-քաղաքական անցուդարձը, երկրի սոցիալական վիճակն ու մշակութային նորությունները՝ համապատասխան վերլուծություններով:

2010 թվականի հոկտեմբերից Հանրային եթերում է նաև «Տեսանկյուն» վերլուծական հեղինակային հաղորդաշարը:

Հանրայինի եթերում Ազգային Ժողովի գործունեությունն է ներկայացրել «Հայլուր խորհրդարան» հաղորդաշարը: Հաղորդաշարը հանրությանն է ներկայացրել պատգամավորների, խումբ-խմբակցությունների կողմից Ազգային ժողովի քառօրյա նիստերի

ընթացքում քննարկման ներկայացված հիմնահարցերը, քնակչությանը հուզող սոցալ-տնտեսական, քաղաքական, մշակութային, ինչպես նաև արտաքին քաղաքականությանը վերաբերող թեմաներով պատգամավորների՝ ՀՀ կառավարությանն ուղղված հարցերն ու դրանց պատասխանները։ Հանրայինը հեռարձակել է նաև Ազգային Ժողովի «Խորհրդարանական շաբաթ» մեկժամյա բողարկումը։

Հանրային հեռուստաթարմերությունը «Հրապարակում» հաղորդաշարի շրջանակներում շարունակել է հանրությանը ներկայացնել ՀՀ կառավարության գործունեությունը՝ հնարավորինս ամբողջական, սպառիչ և հասարակական հետաքրքրություն ներկայացնող տեղեկություններ հաղորդելով անցած շաբաթվա ընթացքում կառավարությունում ընդունված կարևորագույն որոշումների, քննարկումների մասին՝ միաժամանակ ներկայացնելով գործադիր իշխանության տնտեսական քաղաքականությունը, տարբեր ոլորտներում դրա իրականացման ընթացքն ու արդյունքները։

2010 թվականին Հանրայինի եթերում էին «Բանաձև», «Եվրոպական բանաձև», հեռուստանախագծերը, որոնց քննարկման առանցքային թեմաներն էին մարդու իրավունքները, եվրոպական ինտեգրման և քաղաքացիական հասարակության ձևավորման հիմնահարցերը և այլն։ «Հատուկ ռեպորտաժ» հաղորդաշարը հանրությանն է ներկայացնել յուրահատուկ և հետաքրքիր պատմություններ մարդկանց, երևույթների և իրադարձությունների մասին, կատարվել են յուրօրինակ լրագրողական հետազոտություններ՝ արդյունքները հանձնելով հեռուստադիտողի դատին։

Հանրայինի եթերը համալրվել է նաև նոր հասարակական ուղղվածություն ունեցող հաղորդաշարերով՝ «Ականատես. իրական պատմություններ», «Ինտերակտիվ. հազարամյակի ոիթմը»։ «Ինտերակտիվը» հաղորդաշար է տեղեկատվական տեխնոլոգիաների, հայկական կայքերի և հայկական համացանցի ու դրա խնդիրների, հեռանկարների մասին, որը ներկայացնում է լուրեր տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտից, շաբաթական բլոգերի տեսություն, հայկական կայքերի լավագույն տասնյակները և այլն։

Հանրայինի եթերում էր ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկատվության վարչության «Զինուժ» ծրագիրը, որը շարունակել է հանրությանը ներկայացնել հայկական բանակի առօրյան՝ միջազգային ռազմաքաղաքական շփումներ, մարտական հերթապահություն, զորամասային կյանք, զորավարժություններ, զինվորական ճակատագրեր, զինվոր-իրամանատար հարաբերություններ, պատմական-մշակութային նյութեր, ինչպես նաև անդրադարձ բանակի անցած հերոսական ուղուն։

Հանրայինի եթերում շարունակվել է հեռարձակվել նաև ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի և լրատվության վարչության «02» հաղորդաշարը, որը օգնում է ճանաչել ու հարգել քաղաքացու և պետության իրավունքներն ու պարտականությունները։ Հաղորդաշարի գործունեությունը հիմնվում է օրինականության, անձի իրավունքներն ու

ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության և հրապարակայնության սկզբունքների վրա՝ նպաստելով հասարակության իրավագիտակցության բարձրացմանը:

«Մերոնք» հեռուստանախագիծը շարունակել է ներկայացնել տարբեր երկրներում ապրող մեր հայրենակիցներին, որոնք պատմում են իրենց կյանքի, գործունեության և այն երկրի մասին, որտեղ այժմ ապրում են:

Հեռուստաեթերում էր նաև «Երջանկության մեխանիկա» հաղորդաշարը, որի մասնակիցները՝ ճանաչված ու հայտնի մարդիկ, ընտանեկան միջավայրում ներկայանում են ընտանեկան երջանկությանը վերաբերող իրենց պատմություններով՝ ու տեսակետներով։ Նրանց միջամտում և լրացնում են ընտանիքի անդամները՝ արդեն իրենց ընկալումներով ու տեսակետներով՝ փորձելով հայտնի ու ճանաչված մարդկանց ընտանեկան սիրալիր ու բարեկամական մթնոլորտը փոխանցել հեռուստադիտողին։

2010 թվականին Հանրայինը պատրաստել և հեռարձակել է նաև գիտալուսավորչական, հայոց լեզվին և պատմությանը վերաբերող հաղորդումներ և հաղորդաշարեր (մոտ 400 Ժամ)։


2010 թվականին Հանրայինի եթերում էր մեծ հետաքրքրություն և հեղինակություն վայելող «Ինչու է աղմկում անցյալը» ֆիլմաշարը, որն անդրադառնում է պատմության հայտնի դեպքերին ու իրադարձություններին։ Այս ֆիլմաշարի շրջանակներում քաղաքական իրադարձություններին զուգահեռ անդրադարձ է կատարվում տնտեսական, մշակութային կյանքին ու հասարակ ժողովրդի առօրյային ու ճակատագրին, ինչպես նաև ներկայացվում են Սփյուռքը, Հայոց եկեղեցին՝ հիշարժան և կարևոր մանրամասներով։ Այս հաղորդաշարի շրջանակներում հեռուստադիտողին են ներկայացվել հայոց պատմության առանձին ժամանակաշրջաններին վերաբերող մի շարք փաստագրական ֆիլմեր՝ «ճակատագրական պայմանագրեր» (1918-1923թթ. միջազգային համաժողովներում կնքված Հայաստանին և Հայկական հարցին վերաբերող պայմանագրերը՝ Բրեստ-Լիտովսկից մինչև Կարս), «Այս-Սոֆիա՝ Թուրքիայի այցեքարտը» (Կ. Պոլսի սք. Սոֆիայի տաճարի կառուցումը, այն մզկիթի վերածելը՝ Ախթամարի վանքի, հայկական հուշարձանների հետ զուգահեռներով), «Սահմանադրություն» (սահմանադրության պատմությունը հայ իրականության մեջ, հայկական առաջին սահմանադրությունները, ՀՀ Սահմանադրությունը), «Հայկական պետականություն» (հայկական պետականության պատմությունը հնագույն շրջանից մինչև 18-րդ դարավերջ, հայկական քաջավորություններ, եկեղեցու դերը պետականության բացակայության պայմաններում, մելիքություններ և այլն), «Անկախության ճանապարհը» (19-րդ դարասկզբից մինչև Հայաստանի երրորդ հանրապետության հոչակումը, Շահան Նարալին անկախ պետականության ճանապարհի մասին), «Պետություն և անկախություն» (պետություն և անկախություն երևոյթների վերլուծություն, պետականության ատրիբուտներն ու միջազգային ճանաչման գործընթացները), «Ապրիլ 24» (մինչև 1915 թվականը, 1915-1923թթ.

Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ շրջաններում կազմակերպված հայոց Եղեռնը, մտավորականության սպանի իրականացումը, մշակութային եղեռնը և դրանց վերաբերյալ հայ և օտարազգի ականատեսների վկայությունները), «Հայերը և երկրորդ աշխարհամարտը» (1939-1945թթ. հայերի մասնակցությունը 2-րդ աշխարհամարտին), «Ծուշի» (Ծուշի քաղաքի պատմությունը, կառուցումը, ավերումը թուրք-ազերիների կողմից, Ծուշիի ողբերգությունը, Ծուշվա ազատագրումը և քաղաքը այսօր), և «Մայիսյան հերոսամարտեր» (1918 թվականի մայիսին Սարդարապատում, Ապարանում, Ղարաքիլիսայում, Սառնաղբյուրում, Ախալքալաքում մղված հերոսամարտերը թուրքական զորքերի դեմ):

2010 թվականին Հանրայինի եթերում էր նաև «Հայտնի անհայտը» հաղորդաշարը, որը պատմում է անցյալում տեղի ունեցած հայտնի կամ ոչ այնքան հայտնի իրադարձությունների մասին՝ քացահայտելով մինչ այդ չհրապարակված դրվագներ և փաստեր:

«Օտար, ամայի ճամփեքի վրա» հաղորդաշարը պատմում է տարբեր երկրների ու քաղաքների մասին, որտեղ ապրում են մեր հայրենակիցները, չմոռանալով նաև տվյալ երկրների տեսարժան վայրերն ու մշակութային արժեքները: Հաղորդումն արդեն անդրադարձել է 49 երկրների և ավելի քան 230 քաղաքների՝ կատարելով եզակի նկարահանումներ այդ երկրների թանգարաններում, տաճարներում, պալատներում և համալիրներում: Հաղորդաշարը ունի բավականին մեծ հեռուստալսարան ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում: Հաղորդաշարը նմանատիպ հաղորդաշարերի վարկանշային աղյուսակում գրավում է առաջին հորիզոնականը (տես գծապատկեր 5-ում): Իսկ «Հայաստանի ճամփեքով» հաղորդաշարը պատմում է Հայաստանի քաղաքների, գյուղերի պատմաճարտարապետական հուշարձանների, ինչպես նաև մարդկային ինքնատիպ ճակատագրերի մասին: Հաղորդումը հետապնդում է ճանաչողական նպատակներ՝ Հայաստանը հնարավորինս մանրամասն հեռուստադիտողին ներկայացնելու համար:

2010 թվականին հայաստանյան հեռուստալսարանում քաղաքական, հասարակական, ինչպես նաև գիտալուսավորչական, հայոց լեզվին և պատմությանը վերաբերող հաղորդումներում ամենամեծ հեռուստալսարան ապահոված 10 հաղորդումներից 7-ը (ըստ «Տելեմեդիակոնտրոլ» փակ բաժնետիրական ընկերության վարկանշային տվյալների) Հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումներն են (տես գծապատկեր 6):



Հանրայինը 2010 թվականին հեռուստաղիտողին է ներկայացրել նաև մի շարք արտասահմանյան և հայրենական փաստագրական ֆիլմեր և ֆիլմաշարեր. «Աղետ»՝ գերմանական հանրահայտ փաստագրական ֆիլմ, որը հայկական ցեղասպանության օբյեկտիվ վերլուծությունն է, «Խաչքարերը մտնում են Լուվր»՝ ֆրանսիական փաստագրական ֆիլմ, որը պատմում է հայկական հին խաչքարերի ցուցահանդեսի մասին Լուվրում, «Կինոգործիչը»՝ ֆրանսիական փաստագրական ֆիլմ ֆրանսահայ կինոռեժիսոր Ռոբեր Գետիկյանի կյանքի և ստեղծագործությունների մասին, «Երկնքին հառած աչքեր»՝ ամերիկյան գիտահանրամատչելի ֆիլմ տիեզերքի և Երկիր մոլորակի գաղտնիքների մասին, «Հայոց հիշողություն»՝ երկու մասից բաղկաղած փաստագրական ֆիլմ, որում ցեղասպանությունից հրաշքով փրկված հայերը պատմում են իրենց վերապրած արհավիրքների մասին, «Գերմանիա և գաղտնի ցեղասպանությունը»՝ փաստագրական ֆիլմ հայոց ցեղասպանության և հրեաների ցեղասպանության զուգահեռների մասին, «Հայաստանի վերածնունդը»՝ ֆրանսիական փաստագրական ֆիլմ, որը պատմում է անկախությունից հետո մեր երկրի վերելքի և առաջընթացի մասին, «Կինոպետքը. Արտավազդ Փելեշյան»՝ հայկական փաստագրական ֆիլմ հանրաճանաչ հայ կինոռեժիսոր Արտավազդ Փելեշյանի մասին:

Հանրային հեռուստաղերության եթերում հեռարձակվել են զվարճալի մի շարք հաղորդաշարեր՝ «Ծիծաղի տուն», «Աշոտ Ղազարյանը հրավիրում է», «Հանուն սիրո» և այլն:

Հանրայինը իր եթերում միշտ մեծ տեղ է հատկացրել մշակույթին, մասնավորապես՝ հայկական մշակույթին նվիրված հաղորդումներին: Դրանք բազմաբնույթ են իրենց

ընդգրկումներով և հեռուստադիտողին հնարավորություն են տալիս շփվելու արվեստին և մշակույթին նվիրյալ մարդկանց, մտավորականների հետ, լսելու մշակութային նորություններ, իմանալու այս ոլորտի նոր ձեռքբերումների մասին: Մշակութային հաղորդումների գերակշիռ մասը հեռարձակվել է «Արարատ» մշակութային հեռուստաալիքով՝ հնարավորություն ընձեռելով առավելագույն չափով բավարարել հանրության բոլոր շերտերի մշակութային պահանջմունքներն ու ակնկալիքները:

Մեր օրերի թատերական անցուղարձին է անդրադարձել «Ներկայացումը շարունակվում է» հաղորդաշարը, որում լուսաբանվում են գրեթե բոլոր թատրոններում բեմադրված ներկայացումները հստակ հարցադրումներով: Հաղորդաշարը անդրադառնում և բարձրածայնում է նաև թատրոններում ծագած խնդիրների մասին:

2010 թվականին հեռարձակվել է նաև «Կերպարվեստ» հաղորդաշարը, որը ներկայացնում է հայ կերպարվեստի ներկայացուցիչներին, նկարչի, քանդակագործի ստեղծագործական ավանդը, ստեղծագործությունները և նրա տեղն ու դերը մեր կերպարվեստի պատմության մեջ:

2010 թվականին Հանրային հեռուստաընկերության «Հ1» առաջին ալիքի եթերում հեռարձակվել են բազմաթիվ գեղարվեստական ֆիլմեր, ինչպես նաև հայրենական արտադրության հեռուստասերիալներ: Մասնավորապես, 2010 թվականին բավականին մեծ հաջողություն է ունեցել «Աննա» և «Որբերը 2» հեռուստասերիալները և «Հանուն սիրո» բազմասերիանց հեռուստանովելը, որոնք ունեցել են բավականին մեծ հեռուստալսարան: Հարկ է նշել, որ 2010թ.-ին «Աննա» և «Որբերը 2» հեռուստասերիալները հայկական հեռուստաեթերի 10 ամենամեծ լսարան ունեցող հեռուստահաղորդումներից էին (տես գծապատկեր 4): «Աննա»-ն հայկական եթերում երբևէ ամենամեծ հեռուստալսարան ունեցած հեռուստասերիալն է:

Հանրային հեռուստառադիտուններությունը իր որդեգրած քաղաքականության շրջանակներում շարունակել է հայ և օտարազգի դասականների գործերի Էկրանավորումը: 2010 թվականին նկարահանվեց և հայ հեռուստադիտողին ներկայացվեց Ռաֆֆու «Խաչագողի հիշատակարանը» վեպի հիման վրա համանուն վերնագրով հինգ մասից բաղկացած հեռուստատեսային գեղարվեստական ֆիլմը: Ֆիլմը մեծ հաջողություն ունեցավ նաև կինոթատրոններում: Այն աննախադեալ էր իր հետաքրքրությամբ ու հանդիսատեսի թվով: Հանրայինը իր մասնակցությունն է ունեցել նաև Շիրվանզադեի «Արտիստը» վեպի հիման վրա համանուն հեռուստատեսային գեղարվեստական ֆիլմի նկարահանման աշխատանքներին և ձեռք է բերել այդ ֆիլմի հեռարձակման իրավունքները: Ֆիլմը հայ հեռուստադիտողին կներկայացվի 2011 թվականին:

Հայաստանյան հեռուստաեթերի մեծ հեռուստալսարան ունեցող հաղորդաշարերից է նաև «Կյանքի կարուսել» հաղորդաշարը, որի յուրաքանչյուր հաղորդում մի առանձին փոքրիկ ֆիլմ է՝ նկարահանված իրական կյանքի պատմությունների ու դեայբերի հիման վրա:

2010 թվականին շարունակվել են ֆիլմերի կրկնօրինակման աշխատանքները: Կրկնօրինակվել են բազմաթիվ գեղարվեստական, փաստագրական, ճանաչողական ու գիտահանրամատչելի կինոնկարներ, հեռուստասերիալներ, մուլտիպլիկացիոն ֆիլմեր, որոնք հեռարձակվել են բացառապես հայերեն:

«Ութ ու կես» հաղորդաշարը հայ հեռուստադիտողին է մատուցել բազմաթիվ բարձրարվեստ ֆիլմեր: Հաղորդաշարը ներկայացրել է մեծ Էկրանի համաշխարհային պատմության լավագույն ֆիլմերը, անդրադարձել մեր ժամանակների տարբեր կինոփառատոնների անվանակարգերում ներկայացված և մրցանակների արժանացած նորագույն գործերին, ծանոթացրել համաշխարհային հայտնի դերասանների, ռեժիսորների, կինոքննադատների կարծիքներին:

«Հանդիպում» հաղորդաշարի հեղինակները հեռուստադիտողին են ներկայացրել հանրապետության ճանաչված երաժշտներին, երաժշտական գործիչներին և հյուրախաղերի եկած արտիստներին: Հաղորդաշարի հեղինակը, ելեկով հաղորդման խորագրից, հարցագրույցի միջոցով ներկայացրել է տաղավարի հյուրին, պատմել նրա անցած ստեղծագործական ուղու մասին, ծանոթացրել նրա ապագա ծրագրերի հետ և հեռուստադիտողի դատին ներկայացրել երաժշտական դրվագներ օպերային, բալետային ներկայացումներից, համերգային կատարումներ հանդիպման հերոսի մասնակցությամբ: Հաղորդաշարը անդրադարձել է նաև հանրապետության երաժշտական կյանքում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին /հոբելյաններ, հյուրախաղեր, երաժշտական իրադարձային երևույթներ, պրեմիերաներ/:

«Մշակութային հայացք» հաղորդաշարը հանդիպում և գրույց է մշակույթի, արվեստի և սպորտի Հայաստանի ու Ռուսաստանի դաշնության գործիչների հետ:

«Կարոտ» հաղորդաշարը շարունակել է ներկայացնել Հայաստանի տարբեր բնակավայրերը՝ իրենց ավանդույթներով ու սովորույթներով:

«Հոբելյան»-ը գիտության և մշակույթի նշանավոր մարդկանց հոբելյաններին նվիրված հաղորդաշար է, որը ներկայացնում է հոբելյարի կյանքն ու գործը, նրա վաստակը և բողած ժառանգությունը մեր գիտության և մտավոր բնագավառում:

«Ծննդավայր» շարքը նվիրված է հայ մշակույթի անվանի գործիչներին: Հաղորդաշարը հատկապես անդրադարձնում է արևմտահայ և սփյուռքահայ մշակույթի մեծերին, ներկայացնում նրանց կյանքն ու գործունեությունը: Երբեմն հաղորդման նյութ կարող են ծառայել Սփյուռք-Հայաստան կարևորագույն իրադարձությունները: Անդրադարձներ են եղել

նաև հոգևոր և մշակութային կենտրոններին, ինչպես պատմական անցյալի, այնպես էլ նորօրյա գաղթօջախներին և նրանց մշակութային կյանքին:

Հանրայինի եթերում էր նաև մայրենի լեզվին նվիրված «Այք, բեն, զիմ» հաղորդաշարը, որն անդրադարձել է հայոց լեզվին, նրա արտասանական, քերականական սխալներին, որոնք հաճախ առկա են լինում մամուլում և հեռուստաեթերում: Երբեմն զրույցի է հրավիրվում այդ խնդրով մտահոգված որևէ գիտնական, լեզվաբան կամ մանկավարժ:

«Արարատ» հեռուստաալիքով շարունակվել է հեռարձակվել նաև «Դասական ալիք» հաղորդաշարը: Այստեղ հիմնականում ներկայացվում են դասական երաժշտության ստեղծագործություններ, առանձին երաժիշտ կատարողներ՝ դիրիժորներ, դաշնակահարներ, ջութակահարներ, երգիչ-երգչուիիներ: «Դասական ալիք» ծրագրով հեռուստադիտողին է ներկայացվում օպերային, սիմֆոնիկ, զործիքային, վոկալ ստեղծագործություններ:

«Արարատ» հեռուստաալիքով հեռարձակվել է նաև «Պարականոն» հաղորդաշարը, որը հանրության է ներկայացրել հանրաճանաչ երգահանների, երաժիշտների կենսագրության կարևորագույն դրվագներ, սկանդալային իրադարձություններ և հետաքրքրաշարժ պատմություններ: Իսկ «Պատումնաշար» հաղորդաշարի ընթացքում ճանաչված արվեստագետները պատմություններ մեծերի կյանքից:

Պորտաքար հաղորդաշարը նվիրված է Հայկական լեռնաշխարհում և ՀՀ-ում գոյություն ունեցող մեծ քանակությամբ չքացահայտված և չլուսաբանված հնագիտական, պատմական, միջազգային նշանակություն ունեցող հուշարձանների լուսաբանմանը:

«Եվ դարից երկար ճգփում է օրը» հաղորդաշարը անդրադառնում է անվանի, հեղինակավոր մարդկանց լավագույն կատարումներին ու զործերին՝ ներկայացնելով այն, ինչը հատուկ է միմիայն տվյալ անձին, արվեստագետին, քաղաքական, հասարակական կամ ռազմական գործչին:

2010 թվականին «Թատերական ներկայացումներ» հաղորդաշարը շարունակել է ներկայացնել հանրապետության թատրոնների լավագույն ներկայացումները, լավագույն ռեժիսորական և դերասանական աշխատանքները:

«Ծագումով հայերը» հաղորդաշարը շարունակում է իր ճանապարհորդությունը աշխարհով մեկ՝ ներկայացնելով գիտական նվաճումներ, ճարտարապետական գլուխգործոցներ, քաղաքական հզոր անհատականություններ, կինոարվեստի ստեղծագործություններ, գեղարվեստական մնայուն արժեքներ: Դրանց հեղինակները հայեր են՝ աշխարհով մեկ սփոված հայերի զավակներ, որոնց մասին քերը գիտեն կամ բնավ չգիտեն: Հաղորդաշարը հայտնաբերում և հայ հեռուստադիտողին է ծանոթացնում արտասահմանում ապրող և ստեղծագործող այն հայ զործիչներին, ովքեր մեծ ներդրում ունեն համաշխարհային մշակույթի և գիտության ասպարեզում, սակայն ճանաչված չեն հայրենիքում:

«Առողջարան» հաղորդաշարի ընթացքում հիվանդությունների և բուժման մեթոդների մասին հավաստի տեղեկություններ են հայտնում տվյալ ոլորտում մասնագիտացված բժիշկները, հոգեբաններն ու համապատասխան այլ մասնագետներ, ինչպես նաև առաջարկվում են համապատասխան դեղամիջոցներ:

Ցվետանա Պասկալեայի «ճառագայթ» հաղորդաշարի ընթացքում առաջ են քաշվել հասարակությանը հուզող սուր սոցիալական թեմաներ, կատարվել են քննարկումներ, ինչպես նաև առաջադրվել են հարցադրումներ՝ ամենատարբեր բնագավառների մասնագետների հետ:

«Արարատ» հեռուստաալիքը ցուցադրում է նաև երաժշտական ուղղվածություն ունեցող հաղորդումներ և հաղորդաշարեր՝ «Զազի Ժամը», «Պատրաստված է ԽՍՀՄ-ում», «Մեր ուստրոն», «Հայկական էստրադան» և այլ համերգային ծրագրեր: «Զազի Ժամը» շարքը ներկայացնում է ջազարվեստի լավագույն նմուշները, ծանոթացնում հեռուստադիտողներին ջազի պատմության, նրա ոճերի, ուղղությունների և մեծագույն ջազային երաժշտները: Ծրագրում պարբերաբար հայտնվում են «Զազի պատմության էջերը», «Զազային օրացույց», «Հարցազրույց», «Զազի Ժպիտներ» խորագրերը: «Պատրաստված է ԽՍՀՄ-ում» հաղորդաշարը անդրադառնում է սովետական ժամանակաշրջանի երգերին, իսկ «Մեր ուստրոն» շարքը ներկայացնում է 1950-80-ականների սիրված հայկական երգերը:

«Արարատ» հեռուստաալիքի եթերում հատուկ տեղ է գրավում «Հայկական էստրադան», որը ներկայացնում է հայրենական լավագույն երաժշտական տեսահոլովակները: Ցուցադրված տեսահոլովակների օգտին կատարված քվեարկությունների արդյունքում ձևավորվում էր շաբաթվա լավագույն տասնյակը (TOP 10-ը), որը ներկայացվում էր «Հ1» Առաջին հեռուստաալիքի «Թոփ 10» երաժշտական ծրագրի շրջանակներում:

2010 թվականին մշակութային բազմաթիվ հաղորդումների հետ մեկտեղ «Արարատ» հեռուստաալիքը հեռուստադիտողին է ներկայացրել նաև «Հայֆիլմ» կինոստուդիայի, «Երևան» ստուդիայի կողմից նկարահանված գեղարվեստական և վավերագրական ֆիլմեր, բարձրածաշակ գեղարվեստական ֆիլմեր, մշակութային ուղղվածության փաստագրական հեռուստաֆիլմեր և այլն:

Հանրային հեռուստաընկերության եթերում շարունակվել են հեռարձակվել կրթական, մանկապատաճեկան մի շարք հաղորդումներ, որոնք քննարկել են երիտասարդությանը հուզող կարևոր խնդիրներ ու հիմնահարցեր:

2010 թվականին շարունակվել է հեռարձակվել «Հայ ասպետ» հեռուստամրցախաղը: Հեռուստանախագծի նպատակն է խթանել դպրոցականների ձգտումը գիտելիքների ձեռքբերման ու խորացման մեջ, նպաստել հայ պատանու ինքնաճանաշողական հիմքով համակողմանի զարգացմանը:


«Արարատ» հեռուստաալիքով հեռարձակվել է նաև «Արևներ» հաղորդաշարը, որի շրջանակներում «Արևներ» մանկապատաճեկան համույթն ամեն շաբաթ իրենց հասակակիցներին է ներկայացնում նորանոր ստեղծագործություններ, յուրովի այրոպագանդում մանկական երգը: Հաղորդաշարը մանուկ կատարողներին արտահայտվելու մեծ հնարավորություն է տալիս:

«Արարատ» հեռուստաալիքի եթերում էր «Հեքիաքն է կանչում» մանկական հաղորդաշարը, որի ընթացքում մատուցվում են հետաքրքիր հեքիաքներ երեխաների համար, իսկ վերջում ցուցադրվում է մուլտֆիլմ հայերեն լեզվով: Մանկական հաղորդաշարի նպատակն է աճող սերնդի մեջ ազնվություն, ընկերասիրություն, բարոյականություն, ինքնուրույն մտածելու, որոշումներ կայացնելու և բազմաթիվ այլ դրական հատկանիշներ զարգացնելը: Հաղորդաշարը ուղեկցվում է նաև սուրբո թարգմանությամբ:

2010 թվականին Հանրայինը ցուցադրել է «Դատաժամ» հաղորդումը, որը հնարավորություն է տալիս քաղաքացիներին իրազեկվել իրենց իրավունքների ու պարտականությունների մասին, հետամուտ լինել իրենց իրավունքների պաշտպանությանը: Հեռուստադատարանում ընթանում է մրցակցային դատավարություն, և հայցվորն իր շահերն ու խախտված իրավունքների վերականգնման պահանջներն եներկայացնում պատասխանողին: Հաղորդումն իր մեջ ընդգրկում է նաև լսարանային քննարկումներ, տրվում են պարզաբանումներ ու եզրահանգումներ:

2010 թվականին բազմազան էր նաև Հանրայինի մարզական եթերը: Հեռարձակվել են բազմաթիվ խոշոր միջազգային մրցաշարեր և միջոցառումներ. Հունահոռմեական ըմբշամարտի աշխարհի գավաթի խաղերը, Ծանրամարտի Եվրոպայի առաջնությունը, Հոկեյի աշխարհի առաջնությունը (երրորդ խումբ)` Հայաստանի հավաքականի մասնակցությամբ, Ֆուտբոլի աշխարհի առաջնության խաղերը, Ֆուտբոլի Եվրոպայի առաջնության նախընտրական փուլի Հայաստանի հավաքականի մասնակցությամբ խաղերը, Ֆուտբոլի Եվրոպայի չեմպիոնների լիգայի առաջնության խաղերը, Եվրոպայի լիգայի նախընտրական փուլերի խաղերը, Հայաստանի Ֆուտբոլի բարձրագույն առաջնության խաղերը, Ըմբշամարտի աշխարհի առաջնությունը, Ծանրամարտի աշխարհի առաջնությունը, Բասկետբոլի կանանց Եվրալիգայի խաղերը, պրոֆեսիոնալ բռնցքամարտ և այլն:

Հատկանշական է, որ «Տելեմեդիակոնտրոլ» փակ բաժնետիրական ընկերության վարկանշային տվյալների համաձայն 2010 թվականի ընթացքում հեռարձակված բոլոր 10 լավագույն սպորտային հաղորդումները ցուցադրվել են Հանրային հեռուստաընկերությամբ (տես գծապատկեր 7), որոնցից ամենաբարձր վարկանիշը ունեցել է ֆուտբոլի աշխարհի առաջնության Գերմանիա-Իսպանիա հանդիպումը (ոլիտել է 271.9 հազ. մարդ):



Բարձր վարկանիշ են ունեցել նաև Հանրային հեռուստաընկերությամբ ցուցադրված այլ սպորտային հանդիպումներ, ինչպիսիք են՝ ֆուտբոլի 2010թ. աշխարհի առաջնության գրեթե բոլոր հանդիպումները, Եվրոպայի ֆուտբոլի 2012թ. առաջնության նախընտրական փուլի Հայաստանի հավաքականի մասնակցությամբ հանդիպումները, Ծանրամարտի Եվրոպայի առաջնությունը, Բասկետբոլի կանանց Եվրալիգայի Հատիսի մասնակցությամբ խաղերը և այլն:


Հանրայինով հեռարձակվել են նաև «Լրացուցիչ ժամանակ» և «Ֆուտբոլ Առաջինով» մարզական հաղորդաշարերը, որոնց ուշադրության կենտրոնում էր Հայաստանի ազգային հավաքականը՝ ընտրական և ընկերական հանդիպումներով, Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնությունը: Հաղորդաշարերի հաղորդումների ընթացքում համակողմանիորեն լրսաբանվել են տարբեր տարիքի հավաքականների ելույթները, մեր ակումբների մասնակցությունը Եվրագավաթներին, Հայաստանի բարձրագույն խմբի առաջնությունը, Հայաստանի գավաթի խաղարկությունը, պարբերաբար անդրադարձել են նաև Եվրոպայի ուժեղագույն ազգային առաջնություններին:

Ծախմատակերի համար շարունակվել է եթեր հեռարձակվել «Ծախմատ-64» վերլուծական հաղորդաշարը: Ծախմատը Հայաստանում հենակետային մարզաձև է: «Ծախմատ 64» հաղորդաշարը համակողմանիորեն լրսաբանել է բոլոր շախմատային միջոցառումները՝ մանրամասն տեղեկություններ հաղորդելով այդ մրցաշարերում մեր մարզիկների մասնակցության մասին:

2010 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում ցուցադրվել են հանդիսատեսի կողմից մեծ ժողովրդականություն վայելող մի շարք հաղորդաշարեր,

Երաժշտական խոշոր միջոցառումներ և համերգներ («Եվրատեսիլ 2010», «Մանկական եվրատեսիլ 2010», «Ազգային երաժշտական մրցանակաբաշխություն 2009», «Տաշիր 2010. ազգային հինգերորդ մրցանակաբաշխություն» և այլն): Հարկ է նշել, որ «Եվրատեսիլ 2010»-ի երկու եզրափակիչ և մեկ կիսաեզրափակիչ փուլերը, «Տաշիր 2010 ազգային հինգերորդ մրցանակաբաշխություն»-ը և «Մանկական եվրատեսիլ 2010»-ը եղել են տարվա ընթացքում ցուցադրված ամենամեծ վարկանիշ ունեցող երաժշտական հաղորդումները, իսկ 10 ամենամեծ հեռուստալսարան ունեցող երաժշտական հաղորդումներից 6-ը հեռարձակվել է Հանրայինով (տես գծապատկեր 7):

## Գծապատկեր 8.



Հաղորդացանցում իրենց ուրույն տեղը շարունակել են պահպանել նաև երաժշտական այլ հաղորդումներ՝ «Երգ երգոց», «Երաժշտական փոստարկող», «Թոփ 10-ը», «Ուոքիկոնը» և այլ համեռօգալին ծրագրեր ու հաղորդումներ:

«Երգ երգոց» երաժշտական հաղորդումը ամեն շաբաթ անդրադառնում է որևէ ժամանակաշրջանի կամ որևէ կոմպոզիտորի ստեղծագործություններին, որոնք կատարում են էստրադայի ու բատրոնի արտիստները՝ գեղեցիկ ու հետաքրքիր բեմադրություններով։ Հաղորդման ընթացքում երաժշտական կատարումները ընդմիջվում են տարբեր ժամանակաշրջանների հիշողություններով, քաղաքական, տնտեսական, մարզական և մշակութային իրադարձությունների մասին պատմող տարեգրություններով, ինչպես նաև տեղի է ունենում գրույց իրավիրված երիտասարդ և ավագ սերունդները ներկայացնող հյուրերի հետ։

«Թոփ 10» երաժշտական ծրագրի ընթացքում ներկայացվում են շաբաթվա կտրվածքով հեռուստաղիտողների քվեարկությունների հիման վրա ընտրված 10 լավագույն տեսահոլովակները, իսկ տարվա վերջում տեղի է ունենում մրցանակաբաշխություն:

2010 թվականին Հանրայինը սկսեց հեռարձակել նոր «22.30 Ուետրո» երաժշտական հաղորդաշարը, որը հեռուստադիտողին է ներկայացրել ինչ հայտնի, ճանաչված, սիրված արտասահմանյան և ռուսական հիթերը՝ հայ երգիչների կատարմամբ:

«Երաժշտական փոստարկղ»-ը համրության է մատուցում բազմաժանր ու բազմազան երաժշտական ոճեր՝ դասական, ազգային, ժողովրդական, ազգագրական, հայկական և արտասահմանյան էստրադա, հեղինակային երգ, երաժշտական նորություններ:

«Ուորիկոն» հաղորդաշարն ունի տարիների պատմություն և արդեն ավանդույթ է դարձել, որ Հայաստանում տեղի ունեցող գրեթե բոլոր երաժշտական նորությունները, մասնավորապես՝ երգերի, տեսահոլովակների պրեմիերաները, լուսաբանվում և ցուցադրվում են «Ուորիկոնի» երերում: Ավելին՝ այդ ամենն ուղեցվում է հեղինակների, ստեղծագործական անձնակազմի և համապատասխան մասնագետների թեժ քննարկմամբ:

2010 թվականին Հանրային հեռուստաընկերությունը հայ հեռուստադիտողին ներկայացրեց «Եվրատեսիլ 2010» մրցույթ-փառատոնը (այն հայաստանյան հեռուստաեթերում վարկանիշով առաջինն էր), որտեղ Հայաստանը ներկայացրեց Եվա Ովկասը:

Հանրային հեռուստաընկերությունը ներկայացրեց նաև «Մանկական Եվրատեսիլ 2010» մրցույթ փառատոնը (Վարկանիշով հիմնգերորդն էր): Բելոռուսի Հանրապետության մայրաքաղաք Մինսկում կայացած մրցույթի եզրափակիչ փուլում Հայաստանը ներկայացրեց 11-ամյա Վլադիմիր Արգումանյանը և առաջին անգամ Հայաստանին հաղթանակ բերեց Եվրատեսիլի մրցույթներում: Հանրային հեռուստառադիտուններության ջանքերով «Մանկական Եվրատեսիլ» մրցույթ-փառատոնը 2011 թվականին առաջին անգամ կանցկացվի Հայաստանում:

Ընդլայնելով Եվրոպական Հեռարձակողների Միության հետ համագործակցության շրջանակները՝ Հանրային հեռուստաընկերությունը 2010 թվականին հեռարձակել է նաև «Եվրատեսիլ 2010» երիտասարդ երաժշտների մրցույթը:

Հանրայինը 24 ժամյա հեռուստահաղորդումների հեռարձակում է ապահովել նաև արբանյակային կապով, որը աշխարհի հայությանն է ներկայացրել «Հ1» առաջին ալիքի և «Արարատ» մշակութային հեռուստաալիքի լավագույն հաղորդումներն ու հաղորդաշարերը:

**Հեռուստահաղորդումների հեռարձակում**

2010 թվականի ընթացքում Հանրային հեռուստաընկերության «Հ1» առաջին ալիքի հաղորդումները օրական 18-19.5 ժամ հեռարձակվել են Հայաստանի Հանրապետության տարածքում և 24 ժամ Երևանում և հարակից բնակավայրերում: «Արարատ» մշակութային հեռուստաալիքը օրական 24 ժամ հեռարձակվել է հանրապետության տարածքի գերակշիռ մասում՝ ընդգրկելով գրեթե բոլոր խոշոր բնակավայրերը (Երևան, Վանաձոր, Չարենցավան, Սևան, Գավառ, Եղեգնաձոր, Զերմուկ, Ծաղկաձոր, ինչպես նաև Շիրակի մարզ):

Արբանյակային հեռարձակմամբ հաղորդումները նույնպես հեռարձակվել են օրական 24 ժամ ժավալով:

2010 թվականին Հանրային հեռուստաընկերության հաղորդումների հեռարձակման բնագավառում լուրջ ներդրում էր սեփական արբանյակային կայանի կառուցումը, որը շահագործվել է 2010 թվականի ապրիլից: Սեփական կայանի կառուցումը հնարավորություն տվեց Հանրային հեռուստաընկերությանը միջազգային ծրագրին գուգահեռ արբանյակային կապով հեռարձակել նաև «Հ1» առաջին ալիքի հաղորդումները ՀՀ տարածքում (կողավորված): Արբանյակային կապով հեռարձակումը էականորեն բարձրացրել է «Հ1» ծրագրի հաղորդումների հեռարձակման որակը ՀՀ ամբողջ տարածքում՝ ընդգրկելով նաև այն բնակավայրերը, որոնք, իրենց ռելիեֆային դիրքով պայմանավորված, մինչ այդ դիտում էին միայն Հանրայինի միջազգային ծրագրի հաղորդումները: Արբանյակային կայանի շահագործումը հնարավորություն տվեց նաև հրաժարվել ծախսատար ռադիոռելեային կապուղիների շահագործումից՝ էապես նվազեցնելով ՀՀ տարածքում հեռարձակման ծախսերը:

Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է աշխատանքներ տանել արտասահմանի հայկական մեծ համայնքներ ունեցող բնակավայրերում կարելային և այլ կապուղիներով Հանրային հեռուստաընկերության հաղորդումները վերահեռարձակելու ուղղությամբ՝ սփյուռքահայ մեր հայրենակիցների համար ավելի մատչելի դարձնելով Հանրային հեռուստաընկերության հաղորդումների դիտումը: Մասնավորապես, հաշվի առնելով ԱՄՆ-ում հայկական մեծ սփյուռքի առկայությունը՝ 2010 թվականին Հանրային հեռուստաընկերության հաղորդումները շարունակվել են հեռարձակվել «Գլոբ Քասթ Ֆրանս» բաց բաժնետիրական ընկերության կողմից՝ ապահովելով հեռուստաալիքի տարածումը հեռախոսային և կարելային հեռարձակում իրականացնող ընկերությունների միջոցով (Գլոբ Քասթ Ֆրանս ընկերությունը սպասարկում է ԱՄՆ տարածքի մոտ 30% -ը): Իսկ Ֆրանսիայում կարելային ցանցերով Հանրային հեռուստաընկերության հաղորդումները հեռարձակում է ֆրանսիական «Օրանժ» ընկերությունը:

ԱՊՀ երկրներում՝ հատկապես Ռուսաստանում, Ուկրաինայում, Ղազախստանում, Մոլդովայում և Վրաստանում աճել են Հանրային հեռուստաընկերության հաղորդումների կարելային ցանցով հեռարձակման ծավալները: Մասնավորապես, Հանրային հեռուստաընկերության հաղորդումները կարելային ցանցով հեռարձակվում են Մուկայում, Պերմում, Ուֆայում, Ն. Նովգորոդում, Վոլգոգրադում, Վոլժսկիում, Տյումենում, Իմելսկում, Եկատերինբուրգում, Կրասնոյարսկում, Օմսկում, Տոլյատիում, Սուրգուտում, Ո-Դ Սմոլենսկի և Բելգորոդի մարզերում, Խարկովում, Օդեսայում, Քիշինևում, Ալեքսանդրովում, Բարումում և մի շարք այլ քաղաքներում:

## Ֆինանսատնտեսական գործունեություն

Հանրային հեռուստաընկերությունը 2010 թվականին իր գործունեությունն ապահովել է պետական բյուջեից ստացված դրամաշնորհի, առևտրային գովազդից և հովանավորությունից, սեփական արտադրության տեսաշարային, ձայնաշարային և տեսաճայնաշարային նյութերի վաճառքից և այլ աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

«2010 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով Հանրային հեռուստաընկերության համար նախատեսվել էր 2458276.5 հազ. դրամ գումար (ընթացիկ դրամաշնորհ):

Հանրային հեռուստաընկերությունը 2010 թվականի ընթացքում ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի «Հեռուստատեսային ծառայություններ» ծրագրի «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով ևս ստացել է դրամաշնորհ՝ 13000.0 հազ. դրամ, որն ուղղվել է հեռուստատեսային տեխնիկայի ձեռքբերմանը: Վերոնշյալ գումարը ընկերությանն է հատկացվել ՀՀ 2010 թվականի պետական բյուջեում կատարված միջջրագրային վերաբաշխման արդյունքում, որով «Ռադիո ծառայություններ» ծրագրով տնտեսված 13000.0 հազ. դրամ գումարը տեղափոխվել է «Հեռուստատեսային ծառայություններ» ծրագիր:

Ընդհանուր առմամբ, 2010 թվականին ընկերությանը հատկացվել է 2458276.5 հազ. դրամ ընթացիկ դրամաշնորհ և 13000.0 հազ. դրամ կապիտալ դրամաշնորհ: Եկամուտների այլ աղբյուրներից ընկերությունը 2010 թվականին պլանավորել է ստանալ 1275538.6 հազ. դրամ եկամուտ, իսկ ընկերության ստացված փաստացի եկամուտները կազմել են 1262054.5 հազ. դրամ, որը 13484.1 հազ. դրամով պակաս է պլանավորված եկամտից: Նվազումը պայմանավորված է «Արարատ» հեռուստաալիքի առևտրային մուտքերի կրճատմամբ:

2009 թվականի համեմատ 2010 թվականին ընկերությունը ստացել է 512833.3 հազ. դրամով ավելի եկամուտ: Եկամուտների ավելացման 126569.7 հազ. դրամը պայմանավորված էր պետական բյուջեից ստացված դրամաշնորհի ավելացմամբ (պայմանավորված արտարժույթի փոխարժեքային տարբերություններով և զազի սակագնի ավելացմամբ): Փաստացի ստացված եկամուտների ավելացման գերակշիռ մասը պայմանավորված էր 2010 թվականին ընկերության առևտրային գործունեության ընդլայնմամբ, որի արդյունքում էականորեն աճել են գովազդից և հովանավորությունից ստացված մուտքերը՝ 404344.5 հազ. դրամ, իսկ այլ եկամուտներից ստացված մուտքերը նվազել են՝ 18080.9 հազ. դրամով: Արդյունքում՝ 2010 թվականին ընկերության առևտրային եկամուտները 2009 թվականի համեմատությամբ աճել են 386263.6 հազ. դրամով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Հանրային հեռուստաընկերության կողմից 2010 թվականին ստացված եկամուտներն՝ ըստ եկամուտների ստացման առանձին աղբյուրների:

Աղյուսակ 4

2010 թվականին Հանրային հեռուստաընկերության կողմից ստացված  
եկամուտներն՝ ըստ առանձին աղբյուրների

N	Եկամտի տեսակները	2010
1	Դրամաշնորհ	2,458,276.5
2	Առևտրային և այլ եկամուտներ, այդ թվում՝	1,275,054.4
2.1	Գովազդ	624,000.0
2.2	Վճարովի եթերաժամանակ	2,000.0
2.3	Հովանավորություն	357,253.0
2.4	Սեփական արտադրության տեսաշարային, ձայնաշարային և տեսաձայնաշարային նյութերի վաճառք	96,895.8
2.5	Բաժանորդային մուծումներ	
2.6	Հիմնադիրների ներդրումներ և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված ֆինանսական միջոցներ	13,000.0
2.7	Այլ եկամուտներ	181,905.7
	Ընդամենը	3,733,331.0

Աղյուսակի այլ եկամուտներ տողում ներառված են նաև ակտիվներին վերաբերող շնորհներից ստացված եկամուտները՝ 126350.2 հազ. դրամ (կապիտալ դրամաշնորհով ձեռքբերված ակտիվներին վերաբերող շնորհներ՝ 68776.6 հազ. դրամ, անհատույց ստացված հողի շնորհ՝ 57573.5 հազ. դրամ) և արտարժույթի փոխարժեքային տարբերություններից ստացված եկամուտ՝ 30091.6 հազ. դրամ:

2010 թվականին ընկերությունը պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված եկամուտներն ուղղել է «Հ1» առաջին ալիքի, «Արարատ» մշակութային հեռուստաալիքի և «Հ1» միջազգային ծրագրի հաղորդումների արտադրությանն ու հեռարձակմանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հանրային հեռուստաընկերության 2010 թվականի գործունեության ընթացքում կատարված ծախսերն՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների:

Աղյուսակ 5

2010 թվականին Հանրային հեռուստաընկերության կողմից կատարված  
ծախսերն՝ ըստ առանձին ուղղությունների

N	Ծախսային ուղղությունները	Գումարը (հազ. դրամ)
1	Աշխատավարձ և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	1,172,749.2
2	Արտադրական ծախսեր	1,717,723.6
3	Հեռարձակման ծախսեր	650,314.4
4	Այլ ծախսեր	125,978.2
	ԸՆԴԱՍԵՆԸ ԾԱԽՍԵՐ	3,666,765.4

Աշխատավարձ և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ ծախսային հողվածը ներառել է հիմնականում հաստիքային աշխատողների աշխատավարձի վարձատրության ծախսերը, հաղորդումների ստեղծագործական խմբերի աշխատավարձերը, ֆիլմերի և սերիալների կրկնօրինակման աշխատավարձի վարձատրության ծախսերը և դրանց պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները, որոնք կազմում են ընկերության ընդհանուր ծախսերի 32 % -ը:

Արտադրական ծախսերի մեջ ներառվել են հիմնականում հեռուստահաղորդումների արտադրության և ձեռքբերման, հեռուստահաղորդումների հեռարձակման իրավունքների ձեռքբերման և հեռարձակման ծախսերը, հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածը, արտադրական նյութերի և պահեստամասերի ձեռքբերման ծախսերը, գործուղման ծախսերը, տրանսպորտային ծախսերը, կապի ծառայությունների ծախսերը, կոմունալ ծախսերը, լրատվության և այլ արտաքին տեղեկատվության ձեռքբերման ծախսերը, որոնք կազմում են ընդհանուր ծախսերի 46.9 % -ը:

Հեռարձակման ծախսերը իրենց մեջ ներառում են ՀՀ տարածքում հեռարձակման և արբանյակային կապով ՀՀ տարածքում և արտասահմանում հեռարձակման ծախսերը, որոնք կազմում են ընդհանուր ծախսերի 17.7 % -ը:

Այլ ծախսերը կազմում են 2010 թվականին ընկերության կատարած ընդհանուր փաստացի ծախսերի 3.4 % -ը:

Տարեկան գործունեության արդյունքներով ընկերությունը ստացել է 53565.6 հազ. դրամ գուտ շահույթ, իսկ 2010 թվականի գործունեության ընթացքում հարկերի և տուրքերի ձևով պետական բյուջեն է վճարել 346903.1 հազ. դրամ գումար:

2010 թվականին ընկերությունը 2009 թվականի գործունեության արդյունքներով ՀՀ պետական բյուջեն է վճարել 14791.6 հազ. դրամ շահարաժին:

ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի «Հեռուստատեսային ծառայություններ» ծրագրի «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հողվածով Հանրային հեռուստաընկերությանը հատկացվել է 13000.0 հազ. դրամ գումար, որով ձեռք է բերվել հեռուստատեսային կոռունկ՝ օժանդակ սարքավորումներով:

Պետական դրամաշնորհից բացի, ընկերությունը տեխնիկական միջոցների և այլ հիմնական միջոցների ձեռքբերմանն է ուղղել 149091.4 հազ. դրամ գումար (առանց ԱԱՀ), որն իր մեջ ներառում է հիմնականում սեփական արբանյակային կայանի կառուցման ծախսերը՝ 60090.9 հազ. դրամ, տրանսպորտային միջոցների ձեռքբերման ծախսեր՝ 28611.0 հազ. դրամ, չորս հատ հեռուստատեսային տեսախցիկների ձեռքբերման ծախսեր՝ 19550.2 հազ. դրամ, «Հայլուր» լրատվական ծառայության համակարգչային տեխնիկայի վերագինման ծախսեր՝ 4198.0 հազ. դրամ: Մնացած գումարն ուղղվել է ընկերության կարիքների համար անհրաժեշտ

արտադրատնտեսական գույքի, տեխնիկական միջոցների և այլ հիմնական միջոցների ձեռքբերմանը:

## **5. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ**

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը իրականացնում է Հանրային հեռուստառադիոընկերության ռադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործունեությունը: Ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման աշխատանքների համար «2010 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Ռադիո ծառայություններ» ծրագրով Հանրային ռադիոընկերությանը «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հողվածով նախատեսվել է հատկացնել 652735.0 հազ. դրամ: Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի առաջարկությամբ ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի «Ռադիո ծառայություններ» ծրագրով տնտեսված 13000.0 հազ. դրամ գումարը տեղափոխվել է «Հեռուստատեսային ծառայություններ» ծրագիր:

Ընդհանուր առմամբ, «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հողվածով 2010 թվականին ընկերությանը հատկացվել է 639735.4 հազ. դրամ:

### **Ռադիոհաղորդումների պատրաստում**

2010 թվականին Հանրային ռադիոընկերությունը, առաջնորդվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի պահանջներով և Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կողմից սահմանված թեմատիկ ուղղություններով, պատրաստել և հեռարձակել է օրական 50 ժամից ավելի հաղորդումներ:

Հանրային ռադիոընկերության գործունեությունը 2010 թվականին նույնականացնելու համար էր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների և պարտավորությունների իրականացմանը: Մարդու սահմանադրական իրավունքն ապահովելու նպատակով Հանրային ռադիոընկերությունը նույնական իր գործունեության հիմքում դրել է տեղեկատվական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատաճեկան, գիտական, հայոց լեզվի և պատմության, մարզական, ժամանցային և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվական բնույթի բազմազան հաղորդումների արտադրությունն ու հեռարձակումը:

Նախապատվություն տալով սեփական արտադրության հաղորդումներին՝ Հանրային ռադիոընկերությունը ընդլայնել է իր ունկնդիրների շրջանակը՝ ձգտելով բավարարել սոցիալական լայն շերտերի, տարրեր տարիքային խմբերի ու ազգային

փոքրամասնությունների նախասիրությունները: Հանրային ռադիոյի ծրագրային քաղաքականության մեջ առանձնահատուկ տեղ ունեն սոցիալական տարրեր խմբերի՝ հաշմանդամների և տարեցների, ընտանիքի, կանանց, երեխաների, մանկավարժների, բժիշկների, գիմնազիականների, գյուղացիների, արվեստագետների, ուսանողների և այլ սոցիալական խմբերի հիմնահարցերին վերաբերող հաղորդաշարերը:

Այս խնդիրների իրականացումը պահանջում է սկզբունքային առավել ճկուն մեխանիզմների և մոտեցումների կիրառություն, որոնք բխում են հանրության տեղեկատվական կայանը դառնալու հրամայականից և համահունչ են մեր ազգային ու պետական շահերին:

2010 թվականի ընթացքում Հանրային ռադիոընկերության կողմից պատրաստել է 19162.5 Ժամ ռադիոդրումներ: Հաղորդումներն ըստ թեմատիկ ուղղությունների պատրաստվել են հետևյալ ծավալներով.

#### Աղյուսակ 6

2010 թվականին Հանրային ռադիոընկերության կողմից պատրաստված հաղորդումների փաստացի ծավալը՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների

N	Հաղորդումների թեմատիկ ուղղվածությունը	Հաղորդումների պատրաստման ծավալը (Ժամ)
1	Լրատվական, լրատվական-վերլուծական	1587.5
2	Քաղաքական, տնտեսական, հասարակական	88.7
3	Մշակութային հաղորդումներ	693.6
4	Երիտասարդական	940.6
5	Մանկապատամեկան	601.9
6	Կրթական և հայոց լեզու	93.7
7	Ժամանցային	568.9
8	Հոգևոր	246.5
9	Երաժշտական	3938.6
10	Ռադիո Երևան	8760.0
11	Արտասահմանի համար տրվող հաղորդումներ	1095.0
12	Ինտերնետային էջի համար պատրաստվող հաղորդումներ	547.5
	Ընդամենը	19162.5

Ռադիոհաղորդումների մեջ լրատվական և տեղեկատվական հաղորդումները կազմել են ռադիոների զգայի մասը, որոնք անդրադարձել են քաղաքական, տեղական-լրատվական, հասարակական-քաղաքական, մարզական և այլ բնույթի իրադարձություններին: «Ռադիոլուր» ծրագիրը լրատվություն է ներկայացրել յուրաքանչյուր ժամագլխին 5-15 րոպե տևողությամբ, իսկ հիմնական թողարկումը (60 րոպե տևողությամբ) ներառել է օրվա ամբողջ լրահոսք և օրվա կարևորագույն թեմաների վերաբերյալ վերլուծական նյութեր ու հարցազրույցներ:

Լրատվական ծառայության խնդիրներն են՝ օպերատիվություն, տեղեկատվության անաշառ մատուցում և բազմակարծության ապահովում: Հանրային ռադիոընկերության

«Ուաղիոլուրը» իրադարձությունների լուսաբանման խնդրում, շնորհիվ իր տեխնիկական հնարավորությունների և ռադիոյի առանձնահատկությունների, լրատվությունը կարողանում է հաղորդել ավելի շուտ, քան այլ լրատվամիջոցները:

Ընդգրկուն է նաև լրատվության աշխարհագրությունը՝ Լեռնային Ղարաբաղ, Զավախը, Սփյուռքի գաղթօջախներ, ՀՀ մարզեր, միջազգային անցուղարձ և այլն: Օրվա լրահոսք տեղադրվում է նաև ընկերության [www.armradio.am](http://www.armradio.am) կայքէջում, որը հնարավորություն է տալիս ունկնդրին լսելու օրվա ցանկացած ժամին: Ուստանու լսարանի համար աշխատում է «Արմենիա» լրատվական-վերլուծական հաղորդումը, որը հեռարձակվում է ամեն օր, իսկ յուրաքանչյուր շաբաթ ներկայացնում է քաղաքական իրադարձությունների տեսություն, մշակութային անցուղարձ, հատուկ հարցագրույց հայտնի մարդկանց հետ և «Շարաթվա հերոսը» խորագրով հաղորդումներ: «Ուաղիոլուրը» ունի նաև թղթակիցներ ՀՀ տարբեր մարզերում, ԱՄՆ-ում, ԼՂՀ-ում և Վրաստանում, որոնց շնորհիվ հնարավորինս լուսաբանվել են մարզերում առկա խնդիրները, անդրադարձ է կատարվում միջազգային հիմնական իրադարձություններին ու անցուղարձին: Հանրային ռադիոյի եթերն առանձնացել է իր հավասարակշռվածությամբ: Այստեղ ներկայացվել են թե իշխանական և թե ընդդիմադիր գործիչների տեսակետներ: Պետական և քաղաքական նշանակության ոչ մի իրադարձություն դրւս չի մնացել Հանրային ռադիոընկերության տեսադաշտից: Լուսաբանվել են ՀՀ պետական և կառավարական բոլոր պաշտոնական համորդումները, պաշտոնական հաղորդագրությունները, տնտեսական և քաղաքական այլ իրադարձություններ:

«Աշխարհը, հայերը և Հայաստանը» հաղորդաշարը պատրաստվում և հնչում է «Ուաղիոլուրի» թողարկումներում: Ընդգրկում է այնպիսի թեմաներ, որոնք նույն օրը կամ մեկ օր առաջ հրապարակվել են միջազգային ոչ հայերեն լրատվամիջոցներում և վերաբերում են Հայաստանին կամ հայերին: Թեմաներն ավելի շատ ընդգրկում են սոցիալ-մշակութային ոլորտը, երբեմն նաև քաղաքական:

2010 թվականին Հանրային ռադիոյի եթերում է եղել «Կամուրջ» Հայաստան-Սփյուռք հաղորդաշարը, որը վերաբերում է սփյուռքի և հայրենիքի բազմաբնույթ կապերին: Հաղորդաշարի ընթացքում քննարկվում են թեմաներ ներդրումների, հայրենիքում սփյուռքահայ բարերարների գործունեության, կրթամշակութային ձեռնարկումների, Հայաստան սփյուռքահայ ականավոր գործիչների այցելությունների և այլ թեմաների մասին:

Հանրային ռադիոն հեռարձակել է նաև «Հայ իրազեկում» հաղորդաշարը, որը Հայաստանի ու հայության անվտանգության, գոյավիճակի, զարգացումների վրա ազդող կարևորագույն հանգամանքների և ընդհանուր վերելքի համար անհրաժեշտ նախապայմանների մասին է:

Հանրային ռադիոյի մշակութային հաղորդումները անդրադարձել են մշակույթին և մշակութային գործիչների կյանքին ու գործունեության՝ փորձելով տեսադաշտում պահել հանրապետության մշակութային կյանքի անցուդարձը, մնալ անցյալի և ներկայի մշակութային արժեքները կամրջողի դերում:

Ուղիղ եթերում կազմակերպվում են անկեղծ և հետաքրքիր գրույցներ անվանի արվեստագետների հետ, որոնք նվիրված են լինում մշակութային համակարգն օրենսդրության և գործնականում աշխուժացնելուն և այլ մշակութային հիմնախնդիրների լուծմանը («Վերնատուն» հաղորդում):

«Ժամանակի վկան» հաղորդաշարը պարբերաբար անդրադարձել է անցյալ և ներկա պատմական իրադարձությունների քննարկմանը, ներկայացրել պատմաբանների ուսումնասիրություններ, նոր տեսակետներ և բացահայտումներ: Մշակութային ծրագրերի՝ «Մեկ դերասանի թատրոն», «Մեր ճայնադարանի ֆոնդից», «Ռադիոթատրոն», հաղորդումներով ունկնդրին են ներկայացվել ռադիոյի հարուստ ֆոնդում պահպանվող հայ դասական և ժամանակակից գրողների, համաշխարհային գրականության լավագույն ստեղծագործությունների ճայնագրությունները: Պարբերաբար ներկայացվում է Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների մշակութային կյանքը («Հայաստանը մեր տունն է» հաղորդում): Մեր թատրոնի առօրյան, խնդիրներն ու հաջողություններն է ներկայացնում «Կովկասներ» հաղորդումը: Հայաստանի Ազգային արխիվի գաղտնազերծված նյութերով հանրահայտի անհայտ կողմերն է բացահայտում «Թղթապանակ N» հաղորդումը: Մշակութային ծրագրերը տարվա ընթացքում անդրադարձել են նաև հայ ժողովրդի մեծերի հոբելյաններին՝ երիտասարդ ունկնդրին ճանաչելի դարձնելով այդ մտավորականներին և արվեստագետներին:

Հանրային ռադիոն հեռարձակել է նաև հոգևոր հաղորդումներ («Ավետիս», «Չողակն Արարատյան», «Մանանա»), որոնք պատրաստվել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արարատյան թեմի դիվանի հետ համագործակցությամբ: Հաղորդումների ընթացքում ծանոթացնում են հայ եկեղեցու պատմությանը, եկեղեցական ծեսերին և տոնակատարություններին՝ ռադիոունկնդիրներին հնարավորություն տալով հաղորդակցվել հոգևոր կյանքին ու խոսքին, կրթվել քրիստոնեական բարքերով: Հոգևոր հաղորդումներին մասնակցում են հոգևորականներ, հոգեբաններ, ազգագրագետներ:

Հանրային ռադիոընկերության եթերում իրենց ուրույն տեղն ունեն երաժշտական հաղորդումները: Երաժշտական հաղորդումների խմբագրությունը ռադիոունկնդիրն մատուցել է հայկական, ժողովրդական, գուսանական, ժամանակակից և դասական, բազմաժանր ու բազմառն երաժշտական ստեղծագործություններ, ունկնդիրն ներկայացրել հայ մեծանուն կոմպոզիտորների ստեղծագործությունները: Ներկայացվել է հայ ազգային երաժշտության տարբեր շերտեր՝ սկսած հնագույն ժողովրդական երգերից մինչև մեր օրերում ստեղծագործող աշուղներին («Արմատներ»

հաղորդում): Կազմակերպվում են ժամանակակից երաժշտական մշակույթի խորքային հիմնահարցերի պլոֆեսիոնալ և անկեղծ քննարկումներ ուղղիղ երերում՝ մտավորականների, կոմպոզիտորների, երիտասարդ երգիչների և բնագավառի հիմնահարցերով մտահոգ մասնագետների մասնակցությամբ («Կամերտոն» հաղորդում): «Էտյուդներ» հաղորդաշարն անվանի երաժիշտների գործունեության, նրանց կյանքի անհայտ էջերի, խառնվածքների, ճակատագրի, մարդկանց հետ հարաբերությունների մասին է: «Գանձարան» հաղորդաշարը Հանրային ռադիոյի ֆոնդում պահպանված բացառիկ ձայնագրությունների միջոցով ռադիոունկնդրին պատմում է կյանքից հեռացած արվեստագետների և այլ գործիչների մասին: «Հանրային տասնյակը» ամփոփում է շաբաթվա ընթացքում ռադիոունկնդրի պատվերները և առավել շատ պատվիրված երգերը, որոնք տեղ են գտնում հաղորդման մեջ: Մեծ լսարան են ապահովել «Սեկ երգի պատմություն», «Երաժշտություն ու մենք» հաղորդումները: «Սեկ գործիքի պատմություն» հաղորդաշարը պատմում է երաժշտական գործիքների ստեղծման, կատարելագործման, կիրառության մասին: Հաղորդացանցի ամբողջական նկարագիրն առավել հայեցի դարձնելու համար այլ թեմաներով հաղորդումների ձևավորումներում ևս նախապատվությունը տրվել է հայկական մեղեղիներին: Երաժշտական ծրագրերում իրենց մասնակցությունն են ունեցել Հայաստանի Հանրային ռադիունկերության Էստրադային սիմֆոնիկ նվագախումբը, Արամ Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների և «Արևիկ» մանկապատանեկան անսամբլները: Երեք կոլեկտիվներն ել ունկնդրին ներկայացրել են իին և նոր ստեղծագործություններ:

Հանրային ռադիոյի հաղորդացանցն ամեն օր սկսում է իր աշխատանքը «Բարի լույս, Հայաստան» երաժշտական, ժամանցային ծրագրով: Բազմաժանր երաժշտության և օրախնդիր հետաքրքրություն պարունակող տեղեկությունների համադրմամբ երերավարները ռադիոունկնդրին են փոխանցում թարմ ու դրական լիցքեր, փորձում են ստեղծել ուրախ և ջերմ տրամադրություն լսարանի համար: Ծրագիրն ունի նաև մշտական կարճ, օգտակար տեղեկություններ պարունակող էջեր, որոնցից են՝ «Ռադիորժիշկ», «Դուք մտադրվել եք այսօր...», «Մանրութներ», «Հմայքի դպրոց», «Այս զարմանալի աշխարհը», «Հուշանկյուն», «Տժվժիկ» և մյուսները:

Հանրային ռադիոն հեռարձակել է նաև մի շարք մանկապատանեկան ծրագրեր (Զարթուցիչ, Հարի Փոքրի ակումբ, Կար-շկար, Պատիկաշեն), որոնք հեռարձակվում են ամեն օր՝ 60 րոպե ընդհանուր տևողությամբ: Հաղորդումներում երեխաներին տրվում է անհրաժեշտ տեղեկատվություն, անդրադառնում են պատանեկան տարիքին հուզող խնդիրներին, հիմնահարցերին: Կրթական, մշակութային, երաժշտական հաղորդումները լրացնում են գիտելիքի այն պաշարը, որն անհրաժեշտ է նրանց ժամանակին համընթաց քայլելու համար: Խմբագրությունը համագործակցում է պատանի լրագրողների և հաղորդավարների հետ և, ըստ էության, դարձել է ապագա ռադիոլրագրողների իսկական դպրոց: Հաճախ հաղորդումների

թեմաներն ընտրում են երեխաների առաջարկով: Բանավեճերի ընթացքում քննարկվում են երեխաներին հուզող խնդիրներ և մասնագետների՝ հոգեբանների, մանկավարժների մասնակցությամբ փորձում են գտնել պատասխանները:

Կրթադաստիարակչական և տեղեկատվական գործառույթների շնորհիվ՝ խմբագրությունը բավարարում է երեխաների ինֆորմացիոն և կրթական պահանջները: Այս գործում ևս անհրաժեշտ են մանկապատանեկան լսարանին գրավիչ տարրերակներով ու մոտեցումներով ներկայանալու հմտություններ և երերային հաղորդակցության նոր ձևերի շարունակական կատարելազործում:

Յուրաքանչյուր կիրակի երեր է հեռարձակվել մանկական ռադիոթատրոն:

Մանկապատանեկան ծրագրերում առանձնանում է «Լյա-լյա-ֆա» մանկապատանեկան երգի հիթ-շքերթը, որը հնարավորություն է ընձեռում ներկայանալու երեխաների համար ստեղծագործող կոմպոզիտորներին, մանուկ ու պատանի երգիչներին: Ստեղծագործական խումբը համագործակցում է կոմպոզիտորների, մայրաքաղաքի և հանրապետության մարզերի մանկական երաժշտախմբերի հետ:

Երիտասարդական ծրագրերից Հանրային ռադիոյի ամենօրյա եթերում է «Լյունսե» երիտասարդական հաղորդաշարը: Հաղորդաշարի հերոսները երիտասարդներ են իրենց տարաբնույթ խնդիրներով և հետաքրքրություններով, ովքեր սիրում են կյանքն ու փորձում են իրենց տեղը գտնել այս աշխարհում: Տարվա ընթացքում լուսաբանվել են կրթական, բնապահպանական, հասարակական, սոցիալական, մշակութային ու մարզական ոլորտների խնդիրները, պարբերաբար անդրադարձել մարզերում ապրող երիտասարդությանը հուզող խնդիրներին, պատմել արտասահմանում ապրող հայ երիտասարդների մասին: Զգալի տեղ է հատկացվել հայրենասիրական, գեղագիտական և դաստիարակչական թեմաներին: Հաղորդաշարի ստեղծագործական խումբը համագործակցում է Հայաստանի երիտասարդական կազմակերպությունների, ակումբների հետ, լուսաբանում է կրթական ծրագրերը: Ծրագրերում իրենց տեղն ունեն «Խելք խելքի», «Մարզական խաչմերուկ», «Ապրելու բանաձև» և «ՌադիոԱրտ» հաղորդումները: «Մարզական խաչմերուկ» հաղորդումների ընթացքում անդրադարձել են հայկական սպորտի հաղթանակներին, նվաճումներին, խոսել թերությունների և բացքողումների մասին՝ փորձելով մեր լուսաբանմամբ նպաստել հայկական սպորտի բարելավման գործին: «Խելք խելքի»-ն ինտելեկտուալ, ուսուցողական, ժամանցային հաղորդում է՝ միտված երիտասարդության շրջանակներում գիտելիքի, իմացության և տրամաբանության զարգացմանը:

«Ապրելու բանաձև» վերնագրված գրական, պատմական և դաստիարակչական ռադիոպանթեռնում մեծարանքով և խոնարհումով են հիշում Արցախի ազատամարտում հերոսացած հայ քաջորդիներին, փառաբանում հավերժի ճամփորդներին, ովքեր կերտեցին 20-րդ դարի Հայոց պատմության հերոսական ազատամարտի հաղթանակը:

«Երևան» ծրագիրն ամենօրյա հաղորդումների շարք է, որի թեմատիկան ընդգրկում է մայրաքաղաքին վերաբերող բոլոր ոլորտները, ընդհուպ մինչև օրենսդրություն: Հաղորդաշարը

Աերկայացրել է մայրաքաղաքի համայնքներում կատարված աշխատանքները, արձագանքել քնակիչների դիտողություններին և առաջարկություններին, ներկայացրել մայրաքաղաքում կառավարման հաջողություններն ու բացքողումները: Կատարվում են նաև լրագրողական հետաքննություններ քաղաքային տնտեսության, տրանսպորտի, սանհիտարական ծառայությունների, արտաքին լուսավորության, քնակարանային ֆոնդի պահպանության, քաղաքաշինության, ճարտարապետության, վթարային շենքերի ամրացման, փողոցների նորոգման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքների արդյունավետության, քնապահպանական խնդիրների վերաբերյալ: Ներկայացրել են Երևանի հյուրերին, նրանց տպավորությունները և համեմատություններն այլ քաղաքների հետ:

«103.8 FM»-ը՝ Հանրային ռադիոընկերության «Երկրորդ ծրագիր»-ը, բազմաժանր ու բազմաոճ երաժշտական, ժամանցային, հետաքրքիր ծրագիր է երիտասարդների համար, ուր ներկայացվում է անցյալի մեծ վարպետների, ժամանակակից հայ և օտարազգի կատարողների լավագույն ստեղծագործությունները:

#### Ուղիղիաղորդումների հեռարձակում:

2010 թվականի ընթացքում Հանրային ռադիոընկերության հաղորդումները հեռարձակվել են միջին, կարճ, գերկարճ և FM հաճախականություններով: Հեռարձակման աշխատանքներն իրականացվել են «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական միջոցներով, «Ուղիղ» ՓԲ, «Հայաստանի հեռուստատեսային» և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունների կողմից, ըստ սահմանված որակական և տեխնիկական չափանիշների:

Հանրային ռադիոընկերության հաղորդումները եթեր են հեռարձակվել նաև ինտերնետային կապի միջոցով, որտեղ տեղադրվել է ամենժամյա լուրերի էլեկտրոնային տարբերակը՝ հայերենով և անգլերենով: Հեռարձակման աշխատանքները կատարվել են ամբողջ ծավալով՝ պահպանելով ծրագրերի արտադրության և հեռարձակման չափանիշները:

#### Ֆինանսատնտեսական գործունեություն:

Հանրային ռադիոընկերությունը 2010 թվականին իր գործունեությունը ապահովել է դրամաշնորհի ծևով պետական բյուջեից ստացված եկամուտների, առևտրային գովազդից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

«2010 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Ուղիղ ծառայություններ» ծրագրով Հանրային հեռուստաընկերության համար նախատեսվել էր 652735.0 հազ. դրամ գումար: Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի առաջարկությամբ ՀՀ 2010 թվականի պետական բյուջեում կատարվել է միջծրագրային վերաբաշխում և ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի «Ուղիղ ծառայություններ» ծրագրով տնտեսված 13000.0 հազ. դրամ գումարը տեղափոխվել է «Հեռուստատեսային ծառայություններ» ծրագիր: 13000.0 հազ. դրամ գումարի տնտեսումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ 2010 թվականի

հոկտեմբերի 1-ից դադարեցվել է միջին ալիքով (1395ԿՀՅ) հեռարձակումը՝ հաղորդակի ֆիզիկական և բարոյական մաշվածության պատճառով: Իսկ այդ ալիքով հեռարձակվող հաղորդումները սկսել են հեռարձակվել այլ հաճախականություններով:

Ընդհանուր առմամբ, «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հողվածով 2010 թվականին ընկերությանը հատկացվել է 639735.4 հազ. դրամ: Եկամուտների այլ աղբյուրներից ընկերությունը 2010 թվականին պլանավորել է ստանալ 118216.3 հազ. դրամ եկամուտ: Հավաքագրված եկամուտները կազմել են 128357.4 հազ. դրամ, որից 75959.3 հազ. դրամը ակտիվներին վերաբերող շնորհներից ստացված եկամուտներն են: Ակտիվներին վերաբերող շնորհների գերակշիռ մասը՝ 68348.3 հազ. դրամ, անհատույց ստացված հողի գծով շնորհն է:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Հանրային ռադիոընկերության կողմից 2010 թվականին ստացված եկամուտներն՝ ըստ եկամուտների ստացման առանձին աղբյուրների:

Աղյուսակ 7

**2010 թվականին Հանրային ռադիոընկերության կողմից ստացված  
եկամուտներն՝ ըստ առանձին աղբյուրների**

N	Եկամտի տեսակները	Գումարը (հազ. դրամ)
1	Դրամաշնորհ	639,735.4
2	Առևտրային և այլ եկամուտներ, այդ թվում՝	118,216.3
2.1	Գովազդ	11,869.1
2.2	Վճարովի եթերաժամանակ	
2.3	Սեփական արտադրության տեսաշարային, ձայնաշարային և տեսաձայնաշարային նյութերի վաճառք	3,983.4
2.4	Այլ եկամուտներ	102,363.8
Ընդամենը		757,951.7

Ակտիվներին վերաբերող շնորհներից ստացված եկամուտները (75959.3 հազ. դրամ) ներառվել է աղյուսակի այլ եկամուտներ տողում:

2010 թվականին Հանրային ռադիոընկերությունը պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված եկամուտներն ուղղել է «Առաջին ծրագիր», «Երկրորդ ծրագիր» ռադիոծրագրերի, ինչպես նաև արտասահմանում հեռարձակման համար պատրաստվող հաղորդումների արտադրությանն ու հեռարձակմանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հանրային ռադիոընկերության 2010 թվականի գործունեության ընթացքում կատարված ծախսերն՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների:

**2010 թվականին Հանրային ռադիոլոնկերության կողմից կատարված  
ծախսերն՝ ըստ առանձին ուղղությունների**

N	Ծախսային ուղղությունները	Գումարը (2010թ.)
1	Աշխատավարձ և Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	370,528.5
2	Արտադրական ծախսեր	85,980.3
3	Հեռարձակման ծախսեր	158,895.9
4	Այլ ծախսեր	18,833.5
	<b>ԸՆԴԱՍԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>	<b>634,238.2</b>

Աշխատավարձ և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ ծախսային հողվածը ներառել է հիմնականում հաստիքային աշխատողների աշխատավարձի վարձատրության ծախսերը և հաղորդումների ստեղծագործական խմբերի աշխատավարձերը, որոնք կազմում են ընկերության ընդհանուր ծախսերի 58.4 %-ը:

Արտադրական ծախսերի մեջ ներառվել են հիմնականում հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածքը, կոմունալ ծախսերը, կապի ծառայությունների ծախսերը, տրամսպորտային ծախսերը, ռադիոհաղորդումների ձեռքբերման ծախսերը, որոնք կազմում են ընդհանուր ծախսերի 13.6 % -ը:

Հեռարձակման ծախսերն իրենց մեջ ներառում են ՀՀ տարածքում և արբանյակային կապով արտասահմանում հեռարձակման ծախսերը, որոնք կազմում են ընդհանուր ծախսերի 25.1 % -ը:

Այլ ծախսերը կազմում են 2010 թվականին ընկերության կատարած ընդհանուր փաստացի ծախսերի 3 % -ը:

Տարեկան գործունեության արդյունքներով ընկերությունը ստացել է 35104.7 հազ. դրամ գուտ շահույթ, իսկ 2010 թվականի գործունեության ընթացքում հարկերի և տուրքերի ձևով պետական բյուջեն է վճարել 96035.9 հազ. դրամ գումար:

2010 թվականին ընկերությունը 2009 թվականի գործունեության արդյունքներով ՀՀ պետական բյուջեն է վճարել 8760.9 հազ. դրամ շահաբաժին:

Հանրային ռադիոլոնկերությունը 2010 թվականին տեխնիկական և այլ հիմնական միջոցների ձեռքբերմանն է ուղղել 6204.0 հազ. դրամ գումար:

## 6. «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ

Հանրային հեռուստառադիոլոնկերությունը Շիրակի մարզում հեռուստառադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործունեություն է իրականացնում «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ի միջոցով:

Հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման աշխատանքների համար «2010 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով ընկերությանը «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հողվածով նախատեսվել է հատկացնել 22961.9 հազ. դրամ:

Ընդհանուր առմամբ, «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հողվածով 2010 թվականին ընկերությանը հատկացվել է 22961.9 հազ. դրամ, որից 20011.3 հազ. դրամը՝ հեռուստառադիոհաղորդումների պատրաստման, իսկ 2950.6 հազ. դրամը՝ հեռարձակման ծախսերի կատարման համար:

«Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ի հեռուստահաղորդումների հեռարձակումն իրականացվել է Գյումրի քաղաքում և հարակից տարածքներում դեցիմետրային տիրույթի 39-րդ կապուղով և Ամասիայում՝ 41-րդ դեցիմետրային կապուղով, իսկ ռադիոհաղորդումների հեռարձակումը իրականացվել է FM տիրույթում՝ 102.5 ՄՀց հաճախականությամբ:

Հեռուստառադիոհաղորդումների պատրաստման ընթացքում «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ն առաջնորդվել է Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կողմից ընդունված նախատակային ծրագրերով: 2010 թվականին ընկերությունը պատրաստել և հեռարձակել է հեռուստառադիոհաղորդումներ՝ հետևյալ ուղղություններով և ծավալներով.

#### Աղյուսակ 9

2010 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից պատրաստված հեռուստառադիոհաղորդումների փաստացի ծավալն՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների

N	Հաղորդման թեմատիկ ուղղվածությունը	Հեռուստահաղորդումների պատրաստման ծավալը հաշվետու ժամանակաշրջանում /Ժամ/	Ռադիոհաղորդումների պատրաստման ծավալը հաշվետու ժամանակաշրջանում /Ժամ/
1	Լրատվական, լրատվական-վերլուծական	155.1	369.4
2	Քաղաքական, տնտեսական, հասարակական	111.3	0.7
3	Մշակութային	79.7	149.6
4	Մարզական	147.9	379.6
5	Երաժշտական, ժամանցային	2008.8	7013.1
6	Այլ	729.6	847.7
	Ընդամենը	3232.4	8760.0

Լրատվական, լրատվական-վերլուծական հեռուստահաղորդումներից հեռարձակվել է «Օրագիծ» ամենօրյա լրատվական ծրագիրը, որն անդրադարձել է քաղաքական, տեղական-լրատվական, հասարակական և այլ բնույթի իրադարձություններին: Իսկ «Հետագիծ» լրատվական-վերլուծական ծրագիրը (շաբաթը մեկ անգամ պարբերականությամբ)

Աներկայացրել է ամբողջ շաբաթվա լնիքացքում տեղի ունեցած կարևորագույն քաղաքական, սոցիալ-տնտեսական, միջազգային և մարզական իրադարձությունները:

Քաղաքական, տնտեսական և հասարակական ուղղվածություն ունեցող հաղորդումներից հեռուստադիտողին են Աներկայացվել «Փակագիծ» և «Ստորակետ» հաղորդաշարերը, որոնց շրջանակներում իրավիրված մասնագետների հետ քննարկվել են հանրությանը հուզող տարաբնույթ հարցեր ու հիմնախնդիրներ և տրվել են համապատասխան գնահատականներ:

Մշակութային հեռուստահաղորդումներից հեռարձակվել են «Ես և դու» և «Դեպի տաճար» հաղորդումները: «Ես և դու» հաղորդաշարը ներկայացրել է ժամանակակից մշակութային գործիչների, արվեստագետների ստեղծագործությունները՝ նրանց դարձնելով հանրությանն ավելի հայտնի: «Դեպի տաճար» հոգևոր-կրթական հաղորդման շրջանակներում ներկայացվել են Հայ Առաքելական եկեղեցու տոները, ծեսերն ու ավանդույթները:

Մարզական հաղորդումներից հեռուստադիտողին է Աներկայացվել «Շիրակ աշխարհի սպորտ»-ը, որն անդրադանում է մարզում և հանրապետության տարածքում տեղի ունեցած կարևորագույն մարզական իրադարձություններին:

Շիրակի հանրային հեռուստառադիոյի եթերում տեղ են գտել նաև գեղարվեստական ֆիլմեր, հեռուստատեսային սերիալներ, փաստագրական ֆիլմեր և մուլտֆիլմեր:

Շիրակի հանրային հեռուստառադիոն ռադիոունկանդիրներին է ներկայացել մի շարք ռադիոհաղորդաշարերով՝ «Օրագիծ», «Հետագիծ», «Անդրադարձ», «Դեպի տաճար», «Չեկ սպասում», «Երաժշտական խճանկար», «Ջեզ համար» և այլն:

#### Ֆինանսատնտեսական գործունեություն

«Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ն 2010 թվականին իր գործունեությունը ապահովել է դրամաշնորհի ձևով պետական բյուջեից ստացված եկամուտների, առևտրային գովազդից, հովանավորությունից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

«2010 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Ուղիու և հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով ընկերության համար նախատեսվել էր ընթացիկ դրամաշնորհ՝ 22961.9 հազ. դրամ: Եկամուտների այլ աղբյուրներից ընկերությունը 2010 թվականին պլանավորել է ստանալ 11200.0 հազ. դրամ եկամուտ, սակայն ստացված եկամուտները կազմել են 7608.6 հազ. դրամ:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից 2010 թվականին ստացված եկամուտներն՝ ըստ եկամուտների ստացման առանձին աղբյուրների:

**2010 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից ստացված  
եկամուտներն՝ ըստ առանձին աղբյուրների**

N	Եկամտի տեսակները	Գումարը (հազ. դրամ)
1	Դրամաշնորհ	22,961.9
2	Սուստրային և այլ եկամուտներ, այդ թվում՝	7,921.0
2.1	Գովագդ	3,612.0
2.2	Վճարովի եքերաժամանակ	733.0
2.3	Հովանավորություն	3,098.6
2.4	Սեփական արտադրության տեսաշարային, ձայնաշարային և տեսաձայնաշարային նյութերի վաճառք	
2.5	Բաժանորդային մուծումներ	
2.6	Հիմնադիրների ներդրումներ և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված ֆինանսական միջոցներ	
2.7	Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտներ	312.4
2.8	Այլ եկամուտներ	165.0
	<b>Ընդամենը</b>	<b>30,882.9</b>

2010 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոն պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված եկամուտներն ուղղել է հեռուստահաղորդումների և ուղիղհաղորդումների արտադրությանն ու հեռարձակմանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Շիրակի հանրային հեռուստառադիոյի 2010 թվականի գործունեության ընթացքում կատարված ծախսերը՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների.

**2010 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից կատարված  
ծախսներն՝ ըստ առանձին ուղղությունների**

N	Ծախսային ուղղությունները	Գումարը (հազ. դրամ)
1	Աշխատավարձ և Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	20,252.9
2	Արտադրական ծախսներ	4,782.6
3	Հեռարձակման ծախսներ	3,915.8
4	Այլ ծախսներ	842.2
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>	<b>29,793.5</b>

Աշխատավարձ և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ ծախսային հողվածը ներառել է հիմնականում հաստիքային աշխատողների աշխատավարձի վարձատրության ծախսերը և հաղորդումների ստեղծագործական խմբերի աշխատավարձերը, որոնք կազմում են ընկերության ընդհանուր ծախսերի 68% -ը:

Տարեկան գործունեության արդյունքներով ընկերությունը ստացել է 622.0 հազ. դրամ գուտ շահույթ:

## 7. «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ

Հանրային հեռուստառադիրընկերության խորհուրդը հասարակական կարծիքի ուսումնասիրման աշխատանքներն իրականացնում է «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ի միջոցով:

«2010 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ» ծրագրով ընկերությանը «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հորվածով նախատեսվել և հատկացվել է 8000.0 հազ. դրամ:

Կենտրոնի հիմնական նպատակն է ուսումնասիրել Հանրային հեռուստարներության և Հանրային ռադիոյի եթերում հեռարձակվող հաղորդումների և հաղորդաշարերի վերաբերյալ հանրության կարծիքը: Այդ նպատակով «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ն 2010 թվականին անց է կացրել չորս սոցիոլոգիական հետազոտություն, ընդգրկվել են 2400 ռեսպոնդենտներ Երևան քաղաքի բոլոր համայնքներից, ինչպես նաև անցկացվել է փորձագիտական 12 հետազոտություններ 1212 փորձագետների մասնակցությամբ, որոնք վերաբերվել են հետևյալ ոլորտներին՝ հանրակրթություն, գիտություն, սպասարկում, տնտեսություն, մշակույթ, եկեղեցի, իրավունք, սպորտ, քանակ, հեռուստատեսություն, ռադիո, մամուլ, ինչպես նաև ԶԼՄ-ների վերաբերյալ իրենց տեսակետներն ու կարծիքներն են ներկայացրել մշակույթի, կրթության, գիտության բնագավառի, հասարակական կազմակերպությունների և հասարակական-քաղաքական կուսակցությունների, երիտասարդության ու ուսանողության ներկայացուցիչները:

Վերոնշյալ հետազոտությունների և հարցումների արդյունքները նպաստել են Հանրային հեռուստարներության և Հանրային ռադիոընկերության ծրագրերի կառուցվածքում անհրաժեշտ փոփոխությունների կատարմանը, ինչպես նաև ծրագրերի կազմնան գործընթացին հանրության մասնակցության ապահովմանը:

Տարվա վերջում սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների հիման վրա հեռուստատեսության և ռադիոյի լավագույն ստեղծագործողներն ու կոլեկտիվները կենտրոնի կողմից խրախուսվել և ստացել են մրցանակներ:

**ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՌՈՒԹՅԱՆ**

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**